APAGA

Quarterly

آپاگا

فصلنامه

فصلنامه فرهنگی – اجتماعی مطالعات شرق شناسی ، ایرانشناسی و ارمنی شناسی

An International Journal of Oriental Studies

ISSN 1682-5438

شماره ۸۸ زمستان(اسفند) ۱۴۰۰

No. 88, Մարտ, 2022

ԱՊԱԳԱ

Հանդես

APAGA

Quarterly

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական եռամսյա հանդես

An International Journal of Oriental Studies

ISSN 1682-5438

Համար 88 Մարտ, 2022 թ.

No. 88 March 2022

ԱՊԱԳԱ Համար 88 Մարտ, 2022 APAGA

No. 88, March, 2022

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես

An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր

License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian,

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան

POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.ApagaOnline.com and www.apagamonthly.4t.com

E-mail: apaga98@hotmail.com **ISSN 1682-5438**

Բովանդակություն

Հայերեն Հայկական հարց

Անգլերեն Թրքացման ծրագիր

Պարսկերեն Հայ-իրանական կապերը

Contents

Armenian Armenian question

English Turkification

Persian I8an-Armenia relations

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: $ 20 per year Գինը 10000 ռիալ

آپاگا فصلنامه بین المللی ایرانشناسی و ارمنی شناسی

شماره ۸۸ زمستان ۱۴۰۰

صاحب امتیاز و مدیر مسئول

ادیک باغداساریان

صندوق پستی شماره ۹۴۸۸-۱۵۸۷۵

تهران - ایران

نشانی اینترنت www.ApagaOnline.com و www.apagamonthly.4t.com

پست الکترونیکی **apaga98@hotmail.com**

ISSN 1682-5438

فهرست

فارسی مناسبات ایرانیان و ارمنیان

ارمنی مسئله ارمنی

انگلیسی ترکسازی

مقالات و دیدگاه های مندرج در نشریه لزوما" بیانگر موضع "آپاکا" نیست.

نشریه در حک و اصلاح مقاله ها مجاز است.

مقالات و مطالب رسیده باز گردانده نمی شود.

استفاده از مطالب "آپاگا" با ذکر ماخذ آزاد است.

شمارگان ۱۰۰ بها ۱۰۰۰۰ تومان

چاپ احسان-تهران چهارراه ولیعصر پلاک ۱۱۴۸

Հայկական հարցի լուծման շուրջ

Նիկողայոս Ադոնց

(Մաս Ա)

Նիկողայոս Ադոնց

Նիկողայոս Ադոնցը (Տեր-Ավետիքյան) ծնվել է 1871թ. հունվարի 10-ին Հայաստանի Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղում (Սիսիան): Սովորել է Տաթևի ծխական դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև՝ 1892-94թթ. Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: 1899թ. ոսկե պարգևանշանով ավարտել է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմա-բանասիրական ֆակուլտետները: Աշակերտել է Նիկողայոս Մառին: 1899-1901թթ. Եվրոպայում (Մյունխեն, Փարիզ, Լոնդոն, Վենետիկ) խորացել է բյուզանդագիտության մեջ: 1903-ին եկել է Կովկաս, Թիֆլիսում ուսումնասիրել վրացերեն, ածխատել է Էջմիածնի մատենադարանում: Այդ տարիներին Ադոնցը գրել է «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908թ. ռուսերեն) մագիստրոսական դիսերտացիան, որը պաշտպանել է 1909-ին և դարձել Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ: 1916-ին «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» (1915թ. ռուսերեն) աշխատության համար նույն համալսարանում արժանացել է բանասիրության դոկտորի աստիճանի և ստացել պրոֆեսորի կոչում: 1916-ին եղել է Էջմիածնում, Մուշում, Էրզրումում, մասնակցել Վանի հնագիտական արշավախմբին: 1917թ. ընտրվել է Մոսկվայի Լազարյան ճեմարանի պատվավոր հոգաբարձու և պրոֆեսոր: 1920թ. մեկնել է Լոնդոն, ապա՝ Փարիզ: 1930-ին հրավիրվել է դասախոսելու Բրյուսելի համալսարանում և ղեկավարել նոր կազմակերպված հայագիտական ամբիոնը: «Բյուզանդիոն» հանդեսում և այլուր լույս են տեսել նրա արտասահմանյան տարիների լավագույն աշխատությունները: Ադոնցը մահացել է 1942թ. հունվարի 27-ին, Բրյուսելում: Նրա ձեռագրերը հանձնվել են Փարիզի Նուպարյան մատենադարարնին, իսկ գրքերը Բրյուսելի հայ գաղութին:

Ադոնցը թողել է շուրջ 80 հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով գրված արժեքավոր գիտական աշխատություններ՝ նվիրված գլխավորապես հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն ու գրականությանը, հայ-բյուզանդական հարաբերություններին, հայ-հունական բանասիրությանը, առասպելաբանությանը, կրոնին, լեզվաբանությանը: Դրանք մեծ մասամբ կարճ, մենագրական բնույթի ուսումնասիրություններ են: «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունը 20-րդ դարի հայագիտության խոշոր նվաճումներից է: Այնտեղ մանրամասնորեն ուսումնասիրված են Հայաստանի պատմա-աշխարհագրական և

հասարակական-քաղաքական կառուցվածքի, հայ-բյուզանդական հարաբերությունների, նախարարական տոհմերի հետ կապված խնդիրները, առաջին անգամ գիտական վերլուծության է ենթարկված հայ ֆեոդալիզմի և հայ գյուղացիության մի շարք հարցեր:

Հետագայում Ադոնցը գյուղացիության պատմության խնդիրներն ավելի համգամանորեն քննել է «Հայ հին շինականությունը» (1927թ.) ուսումնասիրության մեջ: Մյուս ծավալուն աշխատությունը՝ «Արուեստ Դիոնիսեայ Քերականի և հայ մեկնութիւնք նորին», հայ-հունական բանասիրության մասին առաջին խոշոր գործն է: Գիտական բարձր մակարդակով Ադոնցը վերլուծել է Թրակացու քերականության հայերեն թարգմանությունը և նրա վեց հայ մեկնիչների բնագրերը, կատարել բանասիրական կարևոր շտկումներ: Մի շարք հոդվածներում վեր է հանել հայ-բյուզանդական անվանի ընտանիքների և Բագրատունիների տոհմաբանությունը: Ի մի բերելով հույն հեղինակների կցկտուր տեղեկությունները՝ բացահայտել է բյուզանդական զորավար Արտավան Արշակունու, նրա եղբայր Վարդ Մամիկոնյանի, Վասիլի 1-ին և Մորիկ կայսրերի ու այլ հայազգի գործիչների կերպարները («Պատմական ուսումնասիրություններ», 1948թ.): Մեծ արժեք ունեն նաև Ադոնցի աղբյուրագիտական ու բանասիրական ուսումնասիրությունները՝ նվիրված Փավստոս Բուզանդին, Կորյունին, Եզնիկ Կողբացուն:

«Մաշտոց և նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների» (1925թ.) աշխատության մեջ Ադոնցը ցույց է տվել հայ գրերի ստեղծման պատմական իրադրությունը՝ մաշտոցյան գրերի ստեղծումը դնելով 382-392-ի միջև: Ադոնցը ձեռնարկել է գրել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, որի առաջին հատորը (հնագույն շրջան) լույս է տեսել ֆրանսերեն և հայերեն (1946, 1972): Ուշագրավ են Բրոքհաուզի և Էֆրոնի հանրագիտարանում Հայաստանի մասին Ադոնցի հոդվածները: Նա նաև հմուտ գրականագետ էր, գրել է մի շարք հոդվածներ, 1903-1904թթ. Պետերբուրգում խմբագրել է «Բանբեր գրականության և արվեստի» պարբերականը[1]:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՄԱՆ ՇՈՒՐՋ[2]

ԹԱՐԳՄԱՆՉԻ ԿՈՂՄԻՑ

Հայ մեծ պատմաբան և բանասեր Նիկողայոս Ադոնցի գրքույկի հայերեն թարգմանությունը նպատակ ունի ծանոթացնելու հայ հասարակայնությանը նրա մինչև այժմ գրեթե անծանոթ մնացած ստեղծագործական հարուստ ժառանգության մեկ նոր էջը ևս, բացահայտելու թուրքական հակահայկական քաղաքականության և միջազգային դիվանագիտության կեղտոտ գործարքների սերտաճած կծիկը՝ հայկական հարցը «թաղելու» ուղղությամբ:

Գրքույկը կազմված է երեք հոդվածներից, որոնցից երկուսը «Հայկական հարցի պատմական հիմքը և Թուրքիայի անկումը» և «Թուրքիայի անդամահատումը» գրված են 1918 թվականին, երբ առաջին համաշխարհային պատերազմը դեռևս չէր ավարտվել, և Ն. Ադոնցը գտնվում էր Պետրոգրադում, իսկ մյուսը՝ «Հայկական հարցը Սևրում», գրված 1920

---

[1] – Հայկական սովետական հանրագիտարան, I հատոր.

[2] – ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1989

թվականի հոկտեմբերի 20-ին, Լոնդոնում, արդեն Սևրի պայմանագրի կնքումից հետո: Թեև այդ հոդվածները գրվել են տարբեր ժամանակներում և տարբեր քաղաքական իրադրության պայմաններում, բայց օրգանապես լրացնում են մեկը մյուսին, շաղկապված են իմաստային և տրամաբանական անխզելի միասնությամբ:

[էջ 4]

Հիմնավորապես և պատմական անժխտելի փաստերի լույսի տակ քննադատելով Եվրոպայում բավական լայն տարածում գտած քաղաքական այն կարծիքը, որ հայկական հարցը, ըստ էության, արդյունք է ցարական Ռուսաստանի դիվանագիտական խարդավանքների, Ն. Ադոնցը ցույց է տալիս նման տեսակետի մտացածին լինելը: Նման տեսակետները փաստորեն անհույս փորձեր էին արդարացնելու Օսմանյան կայսրության ժամանակավրեպ գոյությունը:

Նիկողայոս Ադոնցը, կատարելով պատմական խոր էքսկուրս ցույց է տալիս այն հիմնապատճառները, որոնք ժամանակ սատարեցին Օսմանյան կայսրության վերելքին և որոնք պայմանավորեցին նրա փլուզումը: «Օսմանցիները հավաքեցին մյուս ժողովուրդների աշխատության պտուղները,— իրավացիորեն նկատում է Ն. Ադոնցը,— նրանք օգտագործեցին դարերի ընթացքում դիզված հարստությունը, որոնք ժառանգել էին այն ազգություններից, ովքեր կառուցել էին Բյուզանդիա կոչված քաղաքակրթության վեհապանծ տաճարը: Թուրքերի և՛ ռազմական փառքը, և՛ տիրապետությունը անհնարին կլինեին, եթե չլիներ երկրի դրամական հարստությունը և չլինեին արտադրողական ուժերը, որոնք ներկայացնում էր նրա բնիկ քրիստոնյա ազգաբնակչությունը»:

Միանգամայն բնականորեն վաչկատուն եկվորների և հին քաղաքակրթության կրող բնիկ ազգությունների միջև պետք է հակասություններ առաջանային, որոնց վերացումը պետք է լիներ օսմանյան կառավարության առաջնահերթ խնդիրը: Բնակչության եկվոր և բնիկ տարրերի միջև գոյություն ունեցող հակամարտությունը, որ սկսեց խրախուսվել կառավարող շրջանների կողմից, ընդունեց անսքող կրոնական հակամարտության բնույթ: Տնտեսական անլուր շահագործմանը գումարվեցին կրոնական և քաղաքական նվաստացումները: Սրանց գալիս էր գումարվելու մասնավորապես Հայաստանի էթնիկական դեմքը խեղաթյուրելու քաղաքականությունը: Արդեն 1514 թվականի Չալդրանի ճակատամարտից հետո սկսվում է Հայաստանի, այսպես ասած, քրդացման պրոցեսը: Հայաստանում սկսեցին կալվածներ շնորհել բացառապես քուրդ ցեղապետներին, շատ դեպքերում այդ կալվածները դարձնելով ժառանգական: Դրա հետևանքով բուն հայկական տարածքները սկսեցին լցվել վաչկատուն քրդական ցեղերով, որի հետևանքով «մի գյուղատնտեսական երկիր ետ նետվեց և իջեցվեց նախնական հովվական և վաչկատուն կացության»: Այդպիսով խաթարվեց երկրի ողջ տնտեսական և մշակութային կյանքը: Ստեղծվեց մի անհեթեթ կացություն, երբ «անքաղաքակիրթ ցեղերը, լճացած հովվական կյանքի փուլում», գրավեցին «պետական շինության վերին հարկը, մինչդեռ կուլտուրական երկրագործ և արդյունաբերող բնակչությունը բանտարգելվեց նկուղներում»: Արդեն այս պարագան իր մեջ պարունակում էր ապագա փլուզման սաղմերը, քանզի բոլորովին անտեսվեց այն հույժ կարևոր իրողությունը, որ Թուրքիայի փրկությունը նրա քաղաքակրթման, նրա եվրոպականացման մեջ է: Ձեռնարկված բոլոր փորձերը, քրիստոնեական ժողովուրդների բոլոր ջանքերն այդ ուղղությամբ ամլացման և ձախողման դատապարտվեցին:

Օսմանյան կայսրության պատմական ամբողջ զարգացման ընթացքը աներկբայորեն ցույց է տալիս, որ չնայած անբանական վարչակարգի

ամբողջ ճնշմանը, անդադրում կոտորածներին ու հալածանքներին, քրիստոնյա ազգությունները շարունակեցին մնալ կայսրությունում առաջընթացի և քաղաքակրթության ռահվիրաները: Որոշ սուլթաններ և առաջադեմ պետական գործիչներ բարեկարգումների փորձեր ձեռնարկեցին, որոնք, սակայն, մնացին թղթի վրա, քանզի բախվեցին կրոնական կույր անհանդուրժամտության խավարապատ ժայռին և փշրվեցին:

Ճիշտ է նկատում Նիկողայոս Ադոնցը, թե «Երկրի վերածնունդը ձեռք չի բերվում սոսկ լոզունգներ հոչակելով և ճոռոմաբանությամբ: Բարենորոգիչների ջանասիրությունը, եթե անկեղծ է, պետք է ուղեկցվի առաջադիմության համար բնական շարժմանը աջակցելու պատրաստակամությամբ, թեկուզ և այն սկսված լինի քրիստոնյա ազգությունների կողմից: Ըստ երևույթին, բարենորոգչի խնդիրն այն է, որ քաջալերի քրիստոնյաների բաղձանքները և նրանց ազգային շահագրգռությունների սահմանափակ ոլորտից հանելով՝ դեպի պետական գործունեության լայն թատերաբեմ տանի»:

Բայց հենց այդ էր, որ տեղի չունեցավ Օսմանյան կայսրությունում: Կրոնական սանձարձակ անհանդուրժամտության հետևանքով անհույս կորսվեց փրկության միակ աղագը: 19-րդ դարում դա հանգեցրեց կայսրության եվրոպական տիրույթների գերակշիռ մասի կորստին, որից հետո կրոնամեծապետական քաղաքականության սուրսայր գենքը շրջվեց Հայաստանի և հայ ժողովրդի վրա՝ փորձելով լուծել հայկական հարցը հայ ժողովրդի բնաջնջման ճանապարհով և նրա հազարամյակների հայրենիքը դյուրությամբ յուրացնելու ակնկալությամբ:

Այս հարցում թուրքերին օգնության ձեռք մեկնեց մեծ տերությունների դիվանագիտությունը՝ status quo-ի պահպանման միջոցով ջանալով ուժերի հավասարակշռություն ստեղծել Մերձավոր Արևելքում: Մեծ Բրիտանիայի և ցարական Ռուսաստանի հակամարտությունը հանգեցրեց այն անհեթեթությանը, որ Հայաստան անունը փոխարինվեց Քուրդիստանով և երկու կողմերն էլ հավասար եռանդով սկսեցին օգտագործել այն, շարունակելով, սակայն, երեսպաշտորեն օգտագործել հայկական բարենորոգումների խնդիրը իրենց քաղաքական նպատակադրումներում: Այդ կեղծ քրդասիրական քաղաքականությունը օգտագործվեց ընդդեմ հայերի նաև Սևրի պայմանագիրը կնքելիս:

Ելնելով այն հանգամանքից, որ «Մեծ պատերազմի կոչերից մեկն է փոքր ազգերի ազատագրությունը՝ հիմնված ինքնորոշման սկզբունքի վրա», Նիկողայոս Ադոնցը մանրամասնորեն և հիմնավորված փաստարկում է, թե ինչպես պետք է կիրառել այդ սկզբունքը օսմանյան Թուրքիայի նկատմամբ, որովհետև «քաջ հայտնի է, որ չկա ոչ մի երկիր, որտեղ լինեն այնքան շատ ճնշված և ստրկացված ազգություններ, որքան կան Թուրքիայում, սուլթանի լծի տակ»: Հետևաբար, Թուրքիան հենց այն երկրներից մեկն էր, որտեղ ազատորեն պետք է կենսագործվեր ազգերի ինքնորոշման սկզբունքը:

Երբ Նիկողայոս Ադոնցը գրում էր իր հոդվածները, առաջին աշխարհամարտը մոտենում էր իր ավարտին, և այլևս ոչ ոքի համար անհայտ չէր, որ գերմանական խմբավորումը պարտվել է: Այստեղից բխում էր այն ակնհայտ ճշմարտությունը, որ օսմանյան ժամանակավրեպ կայսրությունը դատապարտված է փլուզման: Ելնելով վերոհիշյալից, Նիկողայոս Ադոնցը հիմնավորում է Օսմանյան կայսրությունը հինգ հիմնական էթնիկական գոտիների, այն է՝ օսմանյան Մնատոլիայի, Հայաստանի, Սիրիայի, Քուրդիստանի և Արաբստանի անդամահատելու անհրաժեշտությունը: Հպանցիկ անդրադառնալով մյուս գոտիներին, Ն. Ադոնցը ուշադրությունը բևեռում է Հայաստանի և նրա սահմանների հարցի

վրա: Առանձնահատուկ գիտական հետաքրքրություն են ներկայացնում նրա առաջադրած դրույթները՝ հիմնված նյութի խորհրդացության և պատմական իրողության արդիական մատուցման վրա:
Ջախջախիչ քննադատության ենթարկելով բոլոր այն վերապահությունները, որոնք հավասարապես օգտագործում էին և թուրքական կառավարող շրջանները, և մեծ տերությունների դիվանագիտական ներկայացուցիչները Արևմտյան Հայաստանում հայերի թվաքանակի և տոկոսային հարաբերակցության մասին, անտեսում ջարդերը, ցեղասպանությունը և հայ ժողովրդի բեկորների աշխարհասփյուռ վիճակը՝ Ադոնցը հիմնավորում է այն տեսակետը, որ Հայաստանը պետք է հայերինը լինի, որ հայերը դեռևս այնքան նշանակալի թիվ են կազմում, որ կարող են զբաղեցնել իրենց տարածքը և ապահովել երկրի կենսագործունեությունը:
Անդրադառնալով Սևրի պայմանագրի հարցին, Ադոնցը քննադատության է ենթարկում դաշնակիցների քաղաքականությունը հայկական հարցում և հայ ժողովրդի նկատմամբ: Նա ցավով է մատնանշում այն իրողությունը, որ Մուդրոսի զինադադարի կնքումից մինչև Սևրի պայմանագրի ստորագրումը ընկած գրեթե երկու տարիների ընթացքում Անտանտի տերությունները ոչինչ չարեցին, ոչ մի միջոց չձեռնարկեցին, որպեսզի 1915 թվականի եղեռնից մազապուրծ հայ բեկորներին վերադարձնեն իրենց հայրենի տները, և նրանք շարունակում են մնալ անօթևան, օտար ծագերում դատապարտված հոգեկան բնաջնջման, որն ավելի ծանր եղեռնագործություն է:
Չնայած այն բանին, որ Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածով Հայաստանը ճանաչվում էր որպես ազատ և անկախ պետություն, բայց այդ չէր կարելի համարել հայկական հարցի լուծում: Դա հարցի սոսկ կիսալուծում էր, որովհետև բաց էր մնում Հայաստանի սահմանների հարցը ինչպես ռուսական, այնպես էլ թուրքական կողմից: Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի լուծման հարցը, ընդ որում սահմանափակված չորս վիլայեթների տարածքով, հանձնարարվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Ուիլսոնին: Քննադատելի էր և այն, որ Թուրքիայից չէր պահանջվում ճանաչել խնդրո առարկա հայկական վիլայեթների գիջումը Հայաստանին: Հենց այդ պարագան էր իրավունք վերապահում թուրքական կողմին բողոքելու, թե ոչ մի կարիք չկար ընդլայնելու Հայաստանի սահմանները նախկին ռուս-թուրքական սահմանագծից արևմուտք և հարավ: Սարկազմով է Ն. Ադոնցը նշում այն փաստը, որ վճռականորեն լուծելով Միջագետքի, Սիրիայի, Արաբիայի, Հունական Անատոլիայի հարցերը, «վճռականությունը, սակայն, լքեց դաշնակիցներին, երբ նրանք դեմ հանդիման եկան փոքր Հայաստանի հարցին: Երկրներ և ժողովուրդներ, որոնք շատ ավելի քիչ էին տառապել թուրքական լծից, արդեն լիովին ազատագրված են, մինչդեռ Հայաստանը, որը ասես եռացող կաթսա լիներ թուրքական հնոցում, կրկին դատապարտված է սպասելու»:
Եվրոպական տերությունների աչքին Հայաստանը երևացել է որպես մի աղքատ խնդրարկու, «որը հովանավորություն է աղերսում իր բուն ֆիզիկական գոյության համար: Թերևս այս է պատճառը,— հեգնանքով նկատում է Ն. Ադոնցը,— թե ինչու եվրոպական դիվանագետները գտնում են, որ որևէ մի նվեր, լինի դա երկու կամ երեք վիլայեթ, լիովին բավական է մի մուրացիկ ժողովրդի համար»:
Հայաստանի, որպես անկախ պետության, գոյատևման և զարգացման համար Նիկողայոս Ադոնցը անհրաժեշտ էր համարում, որ այն ընդգրկի 200000 քառակուսի կիլոմետր այն տարածքը, որ իր մեջ ներառնում է Հայկական բարձրավանդակը: Նրա մոտավոր հաշվումներով գոյություն

ունեցող շուրջ երեք և կես միլիոն հայությունը բավարար կլիներ սկզբնապես ապահովելու երկրի կենսունակությունը, ներառյալ և այն ազգային փոքրամասնությունները, որոնք կմնային նրա տարածքում: Ադոնցը լավ էր հասկանում, թե որտեղ էր թաքնված դաշնակիցների վերապահ վերաբերմունքը դեպի Հայաստանը և հայ ժողովուրդը, ինչումն էր նրանց դիվանագիտական անազնիվ խուսանավումների արմատը: Բանն այն է, որ նրանք հայերին գիտում էին որպես ռուսական կողմնորոշում ունեցող ժողովուրդ անտեսելով, որ եթե դա այդպես է, ապա ունի իր պատմականորեն հիմնավորված պատճառները: Մինչդեռ դաշնակիցների «կասկածահարույց» քաղաքականությունը Անդրկովկասում 1918-1920 թվականներին, Հայաստանը մահմեդական շրջափակման մեջ թողնելու ակնհայտ միտումը պետք է որ սնուցեին ռուսական կողմնորոշումը:

Ն. Ադոնցի սույն աշխատությունը պատմագիտական, ազգագրական, քաղաքական, աշխարհագրական, տնտեսագիտական և հրապարակախոսական անուրանալի արժանիքներով օժտված մի գործ է, որը մինչև օրս էլ չի կորցրել իր արդիական նշանակությունը: Այս աշխատությամբ Ադոնցը մեր առջև հառնում է իբրև մի անաչառ հայրենասեր, որը գիտական օբյեկտիվությամբ հիմնավորում է իր ժողովրդի դատը, որը շարունակում է մնալ քաղաքակիրթ աշխարհի ճակատին դրոշմված մի խարան՝ մի ամբողջ ժողովրդի Գողգոթան հանիրավի մոռացության տալու համար:

Այսօր էլ մարգարեաբար են հնչում Նիկողայոս Ադոնցի խոսքերը, երբ նա, ըստ էության, գնահատում է Սրրի պայմանագիրը. «Իրականում բանն այն է, որ հայկական հարցի լուծումը, փաստորեն, հետաձգված է: Սակայն հայկական հարցի պատմությունը ցույց է տալիս, որ ամեն մի անորոշություն, ամեն մի հետաձգում հղի է սարսափելի հետևանքներով հայ ժողովրդի համար»: Մեր օրերում Լեռնային Ղարաբաղի արհեստականորեն պրոբլեմ դարձված հարցի շուրջը ստեղծված քաշքշուկը, այդ անմտած քաշքշուկի հետևանքով ծայր առած ողբերգական իրադարձությունները դրա լավագույն ապացույցն են: Չպետք է թույլ տալ, որ պատմությունը կրկնվի: Այս կապակցությամբ կուզենայինք ընթերցողի ուշադրությունը հրավիրել Ադոնցի քննադատած Մ. Էդգար Գրանվիլլի և տխրահռչակ խորհրդային աղբրբեջանցի ակադեմիկոս Զիյա Բունյաթովի հայացքների համահնչության վրա: Միևնույն թրքասիրական ոգով բարեխնամ սուլթանների ու նրանց կառավարության գովերգում և երախտամոռ հայերի փնովում: Հին երգի նոր կատարում, բայց «ավելի տհաճ նոտաներով»: Չէ՞ որ նոր կատարողը խորհրդային հանրապետություններից մեկի ակադեմիկոս է: Տարբերությունը միայն այն է, որ Գրանվիլլը հայկական հարցի արմատները փնտրում է Ռուսաստանի խարդավանքների մեջ, իսկ Բունյաթովը, խնայելով Ռուսաստանին, իրենց՝ հայերի մեջ: Գրանվիլլի կապակցությամբ Ադոնցը գրում էր. «Ակամայից հարց է ծագում, արդյո՞ք երիտթուրքի ֆես չէ ծածկում այս ֆրանսիացի հեղինակի գլուխը»: Մենք էլ կուզենայինք հարց տալ՝ արդյո՞ք թուրքական գործակալ չէ ծպտված խորհրդային «ակադեմիկոսի» դիմակի տակ...

Սևրի պայմանագրի հայկական հոդվածները այդպես էլ մնացին թղթի վրա: Ավելին, Հայաստանը զրկվեց նույնիսկ այն շրջաններից, որոնք առանց Սևրի էլ պատկանելու էին նրան, բայց անցան թուրքերին: Քարտեզի վրա որպես պատմական հուշ մնացին Վուդրո Ուիլսոնի գծած սահմանները: Սակայն, մնաց հայ ժողովուրդը, հետևաբար և կա նրա դատը: Պատմությունը դեռ չի վերջացրել իր շրջապտույտը:

Երիցս իրավացի էր Ադոնցը, երբ գրում էր. «Հայաստանը ամեն մի պատմական կուլտուրական երկրի նման՝ օրգանիզմ է: Ամենաուժեղ զարկող

զարկերակը, ամենախոր շնչառությունը հայկական է: Իբրև ապրող օրգանիզմ, Հայաստանը չի կարող հրաժարվել իր անցյալից կամ ապագայից»: Մեր պատմությունն ու անցյալը մեր անանջատ մասն են, պատմական անարդարությունները վերացնելը՝ մեր սրբազան պարտքը:

Վ. Դիլոյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՎՐՈՒՄ

Թուրքիայի ճակատագիրը վճռված է:

Քաղաքակիրթ աշխարհը, որ սպասել էր դարեր շարունակ, Սևրի պայմանագրի ստորագրման մասին լուրը ընդունեց թեթևացած շունչ քաշելով: Թուրքիայի հիվանդ կազմվածքի համար այլ դեղամիջոց չգտնվեց, նրա առողջ մասերը կտրտելուց զատ: Թուրքիան անդամահատված է՝ բոլոր ազգային տարածքները անջատված են և այժմ անկախ միավորներ են կազմում: Միայն թուրքական Անատոլիան է մնում նրա տիրապետության ներքո, և նույնիսկ որպես այդպիսին էլ բաժանված է օտարերկրյա գոտիների, այնպիսի տնտեսական, ֆինանսական և քաղաքական պայմաններով է շղթայված, որ այսուհետև Թուրքիան, թուրքերի իսկ խոսքերով, «թողնվել է առանց աչքերի, ականջների, ձեռքերի կամ ոտքերի»: Օսմանյան կայսրությունը, անկասկած, կործանված է: Նա ստացավ պատիժ, որին լիովին արժանի էր: Վերջապես Եվրոպան քաջություն ունեցավ եթե ոչ ամբողջապես խորտակելու, գեթ դուրս քաշելու թունավոր սողունի ատամները, որին նա դարեր շարունակ սնուցել էր իր իսկ սեփական քաղաքակրթության կրծքին:

Այս անգամ դաշնակից տերությունները որոշակիորեն չեն կարող կասկածվել Թուրքիայի հանդեպ սովորական կողմնապահության մեջ: Նա մերժված է իր սև աներախտագիտության համար, իր դավաճանության և հանցանքների համար՝ իր վաղեմի հովանավորների նկատմամբ:

Կհամարձակվե՞նք արդյոք մենք քննարկելու այն հարցը, թե ինչպես դաշնակից տերությունների անողոք ու դաժան վերաբերմունքը ազդեց հայկական հարցի վրա, որը մեր մասնավոր հետաքրքրության առարկան է: Չի կարելի ժխտել, որ այն ամենը, ինչ ծառայել է որպես բարոյական հիմք Թուրքիայի նման դաժան վերաբերմունքի համար, վերցված է, բառիս լայն իմաստով, հայկական կյանքի վշտալի տարեգրությունից: Այդ դեպում ինչպե՞ս վերաբերվեցին դաշնակիցները իրենց կրտսեր եղբոր՝ հայերի նկատմամբ: Վճռականություն ցուցաբերեցի՞ն պատժելու թուրքերին նրանց անլուր հանցանքների համար, որ գործեցին հայերի նկատմամբ, անգամ պատերազմի ընթացքում:

Հարցը թախծալի հուշեր է արթնացնում: Երկու տարի է անցել այն պահից, երբ գոռոզամիտ թշնամին վայր դրեց զենքերը և դաշնակիցներից զինադադար աղերսեց:

Այս ամբողջ ժամանակի ընթացքում տերությունները ոչինչ չարեցին, ոչ մի միջոց ձեռք չառնվեց հրով ու սրով ցանուցիր արված հայերին նպաստել՝ վերադառնալու իրենց տների դեռևս ծխացող մոխրակույտերը: Ավերված և պատերազմի սարսափներից ամայացած Հայաստանը դեռ ներկայացնում է սոսկական մի անապատ, որտեղ աշխատանքը չի կարող ապրել, և որը ավազակախմբերն են տնօրինում:

Հայկական ազգաբնակչությունը, որը խույս տվեց թուրքական բնաջնջումից Անդրկովկասի իր ազգակիցների մոտ, նույնիսկ այնտեղ էլ անդորր չգտավ: Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխության պատճառով հայերը,

թողնված իրենց ճակատագրին, պետք է, նախ, դիմագրավեին թուրքական ներխուժմանը, իսկ հետո էլ տխրահռչակ Ադրբեջանի հանրապետության թաթարների հարձակումները, իրագործված ոչ առանց դաշնակիցների օգնության: Եվ այժմ նրանք արյուն են թափում բոլոր կողմերից նրանց պաշարած թուրք-թաթարական հորդաների դեմ մղած հերոսական պայքարում:

Արդեն հինգերորդ տարին է, ինչ թուրքական նահանգներից արմատախիլ արված հայ ագգաբնակչությունը թափառում է օտար երկնքների տակ: Դրա ճակատագրական հետևանքները անչափելի են: Ժողովրդի հայրենիքը մի սոսկական աշխարհագրական հասկացություն չէ: Ազգային գիտակցության մեջ հողը բարձրացվում է երկրի հասկացության, շնորհիվ այն ամենի ինչը կապում է, ինչ հոգեպես հարազատեցնում է ժողովրդին նրան:

Որոշակի տեղավայրի պայմաններում և ազգային գծերի համամիասնության մեջ կազմավորվում են ժողովրդական ավանդույթները, հեքիաթները, տարազը, բարքերը, լեզվական առանձնահատկությունները, մի խոսքով, ներքին գիտակցականության բոլոր արտահայտությունները: Օտար երկրում այս ամենը մոռացվում է, արմատախիլ լինում և կործանվում: Երկրի հետ կապված պատմական հիշողությունները թորշոմում են: Կարճ ասած, այն ամենը, ինչը կազմում է մի երկրի և մի ժողովրդի հոգեկան կերպարը, ինչը նրանց մշակութային որակ է դարձնում, վտանգի է ենթարկվում օտար շրջապատում:

Մի ժողովրդի հոգեկան բնաջնջումն է՝ կորուստ, որն ավելի ծանր է, քան նյութականը, որ ավերածություն է պատճառում:

Ոչ ոք նրանց օգնության ձեռք չմեկնեց, որ թելադրված լիներ այդ սարսափի գիտակցությամբ: Ոչ ոք հոգ չտարավ, որպեսզի նրանք վերադառնան իրենց երկիրը, իսկ հետո արդեն չափազանց ուշ էր:

Եվ դեռես ոչ մի հնարավորություն չի ընձեռվել թուրքական տեղահանության զոհերի չարաբախտ մնացորդներին՝ վերդառնալու իրենց տները: Հրաշքով փրկված, գերմարդկային ճիգերի գնով, նրանք դեռևս մնում են անապաստան և բեռների պես տեղափոխվում են տեղից-տեղ, հաճախ առանց արձանագրվելու: Այս զրկյալների, իրենց կորուսյալներին զուր փնտրողների աղաղակը արձագանքում է հեռվից ու մոտից:

Մինչդեռ, մի միակ զորեղ խոսք, մի միակ ազդեցիկ պահանջ, որ արտաբերվեր զինադադարը կնքելիս, բավական կլիներ արտաքսելու Հայաստանից այդ ավազակային հրոսակախմբերին և վերադարձի ճամփա բանալու փախստականներին իրենց բուն բնակավայրերը:

Դաշնակից զորքերը դեռևս գործում են Միջագետքում և Սիրիայում: Կիլիկիայում ֆրանսիական գեներալները ներգրավվում են անվայելուչ մրցակցության մեջ թուրք ազգայնականների հետ, հայ ազգաբնակչության թիկունքում: Չնայած դրան, մշտապես ասվում է, որ դաշնակիցներն իրենց տրամադրության տակ միջոցներ չունեն՝ մաքրելու Հայաստանը սովալլուկ արկածախնդիրների կողոպտչական հրոսակախմբերից:

Բարեբախտաբար, հայ ժողովրդի համբերությունը սահման չունի: Այն հեզորեն կրել է զինադադարի այս երկու տարիների բոլոր դժբախտություններն ու փորձությունները, իր հույսը դնելով հաշտության կնքման պահի վրա, երբ, վերջապես, ենթադրաբար, կստանա իրեն հասանելիքը:

Երկար սպասված հաշտությունը կնքվեց Սևրում: Համաձայն 88-րդ հոդվածի Հայաստանը հանաչվեց որպես ազատ և անկախ պետություն: Այս հայտարարությունը, հռչակելով հայկական հույսերի հաղթանակը,

ինքնըստինքյան բավարար կլիներ խաղաղեցնելու ժողովրդի միտքը, եթե այն ագուցված լիներ առավել իրական և հոգատար պայմաններով, որը նրա անհապաղ կենսագործումը հնարավոր դարձներ ամբողջությամբ վեցրած: Սոսկ այն փաստը, որ Հայաստանի սահմանների կարևորագույն հարցը գործնականում բաց է մնում, նշանակալիորեն նվազեցնում է այս ակտի գործած տպավորությունը, որ այլապես, անկասկած, խիստ մեծ նշանակություն ունի:

Ռուսական սահմանը պետք է որոշվի Հայաստանի և նրա հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի փոխադարձ համաձայնությամբ, որոնք երկուսն էլ իրավական առումով դեռես ճանաչված չեն: Նախատեսված է սակայն և շատ ճիշտ, որ այն դեպքում, երբ համաձայնություն չի կայանա, վեճը կլուծեն գլխավոր դաշնակից տերությունները: Սահմանը Հայաստանի և Թուրքիայի միջև նույնպես մնում է չորոշված, այստեղ խնդիրը դրված է Միացյալ Նահանգների պրեզիդենտի վրա, սահմանափակելով նրա լիագորությունները չորս վիլայեթների տարածքով:

Անշուշտ, գերադասելի կլիներ այլ ձևակերպում, որը հստակորեն մատնանշեր, որ ամենից առաջ Թուրքիան պետք է ճանաչի խնդրո առարկա հայկական վիլայեթների զիջումը: Եթե այդպես արվեր, օսմանյան կառավարությունը ձեռնպահ կմնար այն անհարկի դիտողությունից, որ նրա ներկայացուցիչները թույլ տվեցին անելու Սևրի պայմանագրի դեմ իրենց բողոքում, այն է՝ թե ոչ մի կարիք չկար ընդլայնելու Հայաստանը նախկին ոուս-թուրքական սահմանագծից այն կողմ: Նա չէր կարողանա միամտո-

րեն հավակնել հավատալու, որ պահանջվում է նրա կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչումը, որը ծնունդ էր առել ռուսական հեղափոխության թոհուբոհում, ճանաչում, որն արժանի է ուշադրության: Եթե 90-րդ հոդվածն ընդունում է չորս վիլայեթների ամբողջապես Հայաստանին փոխանցելու հնարավորությունը, այդ առումով ավելի դրական հայտարարություն ցանկալի կլիներ, պրեզիդենտին թողնելով փոփոխումներ կատարելու ընտրությունը:

Այս ամենը, սակայն, մեծ կարևորություն չունի: Իրականում բանն այն է, որ հայկական հարցի լուծումը, փաստորեն, հետաձգված է: Սակայն հայկական հարցի պատմությունը ցույց է տալիս, որ ամեն մի անորոշություն, ամեն մի հետաձգում հղի է սարսափելի հետևանքներով հայ ժողովրդի ճակատագրի համար: Սևրի դիվանագիտությունը մեծ վճռականություն ցուցադրեց ուրիշ և ավելի մեծ թուրքական նահանգներ հանձնելիս: Նա խիգախորեն թոթափեց թուրքական լուծը Միջագետքից, Սիրիայից, Արաբիայից և Հունական Անատոլիայից, ու գտավ և՛ կամք, և՛ ժամանակ՝ որոշելու համար նրանց սահմանները:

Վճռականությունը, սակայն, լքեց դաշնակիցներին, երբ նրանք դեմ հանդիման ելան փոքր Հայաստանի հարցին: Երկրներ և ժողովուրդներ, որոնք շատ ավելի քիչ էին տառապել թուրքական լծից, արդեն լիովին ազատագրված են, մինչդեռ Հայաստանը, որը ասես եռացող կաթսա լիներ թուրքական հնոցում, կրկին դատապարտված է սպասելու:

Հայերի հուսահատական կանչերը արձագանքում են աշխարհով մեկ: Սիրիայի հարթավայրերը հեղված են նրանց արյունով, նրանց մարմինները սփռված են Միջագետքի ավազուտ անապատներում: Մինչդեռ հենց Սիրիան ու Միջագետքն են կյանքի կոչված մեծ քաղաքակրթության տեր տերությունների հովանու ներքո, մինչ Հայաստանը թողնված է իր անորոշ ճակատագրին:

Ի՞նչը դրդեց Սևրի բարձրագույն դատարանին անխրախուսաբար նայել

Հայաստանի չափերի հարցին: Ի՞նչ արգելք կանխեց նրան ավելացնել Հայաստանին այս երեք կամ չորս վիլայեթները, ի՞նչը դրդեց նրան գործը վերապահել պրեզիդենտ Ուիլսոնին:
Եթե սա վիճելի հարց է, ապա լուծման բանալին պետք «գտնել նրա բուն պատմության մեջ: Դաշնակիցները նույնքան քաջատեղյակ են հայկական հարցին, որքան պրեղիդենա Ուիլսոնը: Կես դար շարունակ միջազգային դիվանագիտությունը առևտուր է արել նրա շուրջ: Մեկ անգամ չէ, որ հայկական վիլայեթների անունները հիշատակվել են գանագան միջազգային ակտերում, սկսած 1878 թվականից: Անգամ պատերազմի նախօրեին, երբ բարեփոխումներ պետք է կատարվեին, այս վիլայեթները բաժանվեցին սեկցիաների: Ամեն ոք կիիշի այս:
Թվում է, որ իրական Հայաստանը պետք է փնտրվեր այդ նույն վիլայեթների սահմաններում և, այդ դեպքում գործը, եթե անհրաժեշտ էր, կվերապահվեր պրեզիդենտի միջնարարությանը:
Ոչ մի արտաքին ուժ չէր կարող կանխել դաշնակիցներին՝ ցուցադրելու իրենց բարյացակամությունը: Թուրքիան ընկած է դիտապաստ, ինչպես նաև Գերմանիան ու Ավստրիան: Ռուսաստանը այժմ համր, հեռացված է կոնֆերանսի սեղանից: Բոլոր թշնամական ազդեցությունները, համենայն դեպս այդպես համարվողները, ջլատված են: Բոլոր հնարավորությունները կային ցանկացած պայմանները թելադրելու Թուրքիային: Չնայած դրան, դաշնակիցները միայն կիսով չափ բավարարեցին հայերին, մինչդեռ մյուս երեքը անջատվեցին նրա տարածքից: Անջատված վիլայեթների մի մասը մնում է Թուրքիային կցված, իսկ մնացյալը, Եփրատից արևելք, վերապահված է Քուրդիստանին:
Այս վերջին քայլը արդեն բացահայտ թշնամական ակտ էր՝ ուղղված Հայաստանի կենսական շահերի դեմ: Անշուշտ, հայերը, դաշնակիցներից նվազ շահագրգռված չեն անկախ Քուրդիստան ստեղծելու գործում: Այս միջոցով խավարամիտ քուրդ ցեղապետները կդադարեն թուրքական մանր քաղաքագետների ձեռքին ստոր գործիք լինելուց: Բանն այն է, սակայն, որ Քուրդիստան ստեղծվում է ոչ այնտեղ, որտեղ պետք է ստեղծվեր: Օտար տարածքում նման արհեստական կազմավորումի գաղափարը ավելի շատ կսազեր ծեր մոլլա Իդրիսին կամ թուրքական կառավարողներից նրան ընդօրինակողներին, որոնք երազում էին հայկական շրջանների «քրդացման» մասին: Բայց եվրոպական դիվանագետների կողմից հայկական կոտորածների ոգեշնչողների հիմնական քաղաքականությունը վերցնելը և վավերացնելը անսպասելի և ապշեցուցիչ հարված է:
Այս ակտի հիմքում ընկած քաղաքականությունը բացահայտորեն տարբեր է, և կարելի է ըմբռնել, եթե մտաբերենք 1916 թ. Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև կնքված գաղտնի համաձայնությունը, որը վերաբերում էր Հայաստանի մասնատմանը ճիշտ և ճիշտ Խարբերդի գծի երկայնքով:
Դերսիմի և Խարբերդի սանջակները, որոնք այժմ վերապահվում են Քուրդիստանին, իրականում կազմում են և՛ աշխարհագրական, և՛ էթնիկական առումով Հայկական բարձրավանդակի անբաժան մասը: Պատերազմից առաջ այս շրջանում՝ կային 100000 հայեր (85000 ըստ Լինչի և 70 հազար ըստ Քինեի) և նույն կամ ավելի մեծ թվով մի ազգություն, որը սխալմամբ քրդական էր համարվում: Թուրքերը նրանց «ղզլբաշներ» են անվանում, հայերը՝ «դուզիկներ»: Այս վերջին անվանումը, ավելի հաճախ նրանք տալիս են Դերսիմի բնակիչներին: Արևելքում, մահմեդական տիրապետության ներքո, լեզուն համարյա դադարել է ազգության չափանիշ լինելուց, կարևորությամբ տեղը զիջելով կրոնին, որպես գլխավոր գործոնի:

Ե՛վ ղզլբաշները, և՛ Դերսիմի բնակիչները հետևում են մի կրոնի, որը տարբեր է քրիստոնեությունից ու իսլամից: Նրանց հավատալիքները հիմնված են քրիստոնեական և մանիքեական ուսմանքների մի խառնուրդի վրա՝ արտաքուստ սքողված շիիզմով: Պատմական լեզվով ասած, այս նշանակում է, որ նրանք աղանդավորներ են, հայկական պավլիկյանության հետևորդներից: Շնորհիվ նրանց շիիստական գծերի, սունիները նրանց «ղղլբաշներ» են անվանում, դրանով իսկ նույնացնելով նրանց պարսիկների հետ: Հայկական «դուզիկ» անվանումը, սակայն նշանակում է «աղանդավոր»: Սա հավանաբար բացատրում է Դերսիմ անվան ծագումը՝ «աղանդավորների երկիր» (դուզ՝ հին Դուրգից, այստեղից էլ Դուրգաենա և նրա արաբական ձև Դուրսիմ):

Պավլիկյան աղանդավորները գրավում էին ճիշտ այն տերիտորիան, որը Դերսիմի լեռնային շրջանից տարածվում է մինչև Խարբերդ, ինչպես որ նշված է մեր կողմից հաջորդ հոդվածում: Բյուզանդիայի ճնշման տակ նրանց մի մասը միացավ պաշտոնական եկեղեցուն, մյուսները պահպանվել են առ այսօր Ակնի (Էգին) շրջանում հոռոմ կամ քաղկեդոնական հայեր անունով:

Մյուս կեսը տեղի տվեց իսլամի ազդեցությանը և յուրացրեց այն հանելուկային տարազը, որն առ այսօր առեղծված է մնում անհիրազեկ մարդկանց համար: Բյուգանդական եկեղեցու նկատմամբ տածած իրենց մոլեռանդ ատելության մեջ պավլիկյանները, չցանկանալով ճանաչել նրա գերիշխանությունը, գերադասեցին ընդունել իսլամը, որը երևան է գալիս արաբների հետ ունեցած նրանց հարաբերություններից:

Չնայած թուրքերի ողջ հանդուրժողականությանը, ղզլբաշները և դերսիմները այսօր ավելի անբարյացակամ են թուրքերի քան թե քրիստոնյաների նկատմամբ: Ավանդույթներն ու սովորույթները նրանց շատ ավելի սերտորեն կապում են վերջիններիս: Ղզլբաշները, մի երկրագործ ժողովուրդ, վայելում են նաև գերազանց պտղաբույծների և ունակ վաճառականների համբավ: Նրանց էթնիկական բնավորությունը և խաղաղասիրական հակումները նույնպես խստորեն հակադրվում են քրդերին: Ոչ մի հիմք չկա, ինչ էլ որ լինի միտումը, քրդական ծագում վերագրելու այս կիսաքրիստոնյա տարրերին: Շատ ավելի մեծ իրավունքով նրանք կարող են համարվել այդ երկրի բնիկ քրիստոնյա ազգաբնակչությանը պատկանողներ:

Համանման նկատառումները արգելում են ընդունելու նաև Դիարբեքիրի վիլայեթի հայկական շրջանները՝ Արղանայի սանջակը և Դիարբեքիր սանջակի հյուսիսային մասը, Քուրդիստանին հատկացնելու արդարացիությունը: Պատմականորեն Դիարբեքիրի նախապես ասորի-քաղդեացիների կամ ավելի շուտ երբեմնի հզոր նեստորական եկեղեցու և Հակոբիկական դավանանքին հետևողների հող էր: Այս եկեղեցիների հետնորդներին դեռ կարելի գտնել այնտեղ: Քրիստոնեական դոգմաների և մահմեդական ուսմունքների խառնակումից առաջ եկան հավատալիքներ, որոնք հիմք ծառայեցին ստեղծելու անորոշ կամ չեզոք ազգության կրոնական համայնքներ: Եվ այս համայնքին թյուրիմացաբար քրդական ծագում է վերագրվում:

Իրենց բնական սահմաններում Դերսիմի, Խարբերդի և Արղանայի սանջակները կազմում են Հայկական լեռնաշխարհի մասը: Որևէ պետության աշխարհագրական ամբողջականությունը էական է, թեկուզ այն լինի ստրատեգիական նկատառումներով, որպես պաշտպանության միջոց:

Հայկական լեռնաշխարհը որոշակի ամբողջություն է, որը ոչ մի հակաճառություն չի ընդունում: Համաձայն Լինչի պատկերավոր խոսքի, այն մի լեռնային տանիք է, որ իջնում է դեպի Սև ծովը հյուսիսում, դեպի Տիգրիսի

երկու վտակների հովիտները հարավում և հատվում է Եփրատի ջրերով արևմուտքում: Այս սահմաններում Հայկական լեռնաշխարհը իրենից ներկայացնում է մի աշխարհագրական, պատմական ու տնտեսական, ինչպես նաև մի ընդհանուր էթնիկական ամբողջություն:

Այս լեռնաշխարհում հիմնված պետությունը չի կարող կայուն համարվել, եթե ամբողջապես չի զբաղեցնում այդ լեռնային տանիքը՝ իր բնական թեքություններով:

Հնագույն ժամանակներում Հայաստանի պաշտպանության ստրատեգիական գիծը անցնում էր Սղերդից Դիարբեքիրի վրայով Մալաթիա, ամրությունների մի ամբողջ շարքով: Արձնը (այժմ ավերակ, Սղերդից արևմուտք), Մարտիրոպոլիսը (ներկայիս Մուֆարկինը), Անգղը (հայտնի ամրոց, այժմ Դիարբեքիրից հյուսիս գտնվող Էգիլ գյուղը, որտեղ պահվում էին հայ Արշակունի արքաների գանձերը) պաշտպանության այդ գծի վրայի հիմնական ամրություններն էին: Այստեղ էր նաև գտնվում Տիգրանակերտ նշանավոր քաղաքը:

Եփրատի աջ ափի երկայնքով, Մալաթիայից մինչև Սատալ (ներկայիս Սադաղը), Քելքիթ դետի ակունքին, անցնում էր ամրությունների արևմտյան գիծը: Սրանցից Արաբկիրը, Արգովանը, Եգինը, Դիվրիկը, Զմառան և Կամախը այսօր էլ դեռ կանգուն են: Այս զույգ գծերն էլ պահպանում էին Հայաստանի ստրատեգիական, ինչպես նաև բնական ամբողջականությունը:

Հայաստանի սահմանների հարցը մի սոսկական վիճաբանություն չէ՝ պետության մեծ կամ փոքր չափերին վերաբերող, ինչպես որ այն կարող է թվալ պատահական դիտորդներին: Այն պետության բուն գոյության և նրա մշակութային ու քաղաքական կայունության համար կենսական հարց է:

Պատմությունը հաճախ է հայերին զրկել իրենց բնիկ լեռնաշխարհի վրա, որպես ամբողջի, քաղաքական տիրապետության առավելությունից: Այս տիրապետությունը հավասարապես մերժվել է այն արտաքին ուժերին, որոնք թուլացնելով Հայաստանը բաղձում էին տիրանալ նրա բարձունքներին: Այդ մեծ թշնամիները՝ Հռոմը և Պարսկաստանը, Բյուզանդիան և արաբները, Թուրքիան և Իրանը հերթով մրցապայքարի մեջ մտան տիրանալու համար Հայաստանին և չկամենալով միմյանց զիջել այս բնական միջնաբերդը, ի վերջո համաձայնության եկան բաժանելու այն: Անդամահատված ազգային օրգանիզմը շատ բան է կորցնում իր կենսունակությունից:

Այստեղ է ընկած հայոց պատմության դժբախտ ասպեկտներից մեկը:

Այժմ, ինչպես և հնում, պատմության նույն սուրը բարձրացել է Հայաստանի վրա՝ երկատելու այն և դրանով իսկ բաժան–բաժան անելու նրա ժողովրդի ուժերը: Հայաստանի քաղաքական վերածնության անհրաժեշտ նախապայմանն է, մեկ կառավարիչը, մեկ տիրապետությունը նրա ամբողջ տարածքի վրա:

Որոշակի ժամանակներում Հայկական լեռնաշխարհում հայկական, իսկ ավելի շատ մահմեդական ծագում ունեցող քաղաքական մանր օրգանիզմներ ապրել են կողք-կողքի (թեև ոչ երբեք երկար ժամանակ):

Իրերի այսպիսի դրությունն ընդունելի էր և թույլատրելի այն ժամանակների պայմաններում, երբ Հայաստանում, ինչպես և ամենուր, ապրանքափոխանակությունն ազգային տնտեսության գերակշռող ձևն էր: Ամեն մի հովիտ, փակված լեռնաշղթայով, ապրում էր սեփական արտադրանքի հաշվին: Ամեն մի լեռան կարիքները բավարարվում էին սեփական հոտերով ու նախիրներով:

Ներկա ժամանակներում ոչ մի պետություն չի կարող մեկուսացված ապրել: Պետության ծաղկումը որոշվում է այն միջոցներով, որոնց նա տիրում է արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու համար, ավելին՝ համաշխարհային տնտեսության հորձանուտի մեջ նրա ներգրավված լինելով: Սրանից է կախված պետությունների կենսունակությունը, նրանց քաղաքական ու մշակութային արժեքը:

Հետևաբար, եթե միայն ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը ազգային բաղձանքների ժամանակավոր բավարարման հրավառության ցուցադրում չէ, նա պետք է այնպիսի ձևեր ընդունի, որոնք կարողանան երաշխավորել պետության անկախ գոյությունը:

Այն պահից, ինչ հայկական հարցը բարձրացավ, այդ երկիրը Եվրոպայի աչքին հանդես եկավ որպես մի մուրացկան, որը հովանավորություն է աղերսում իր բուն ֆիզիկական գոյության համար: Թերևս այդ պատճառով էլ եվրոպական դիվանագետները գտնում են, որ որևէ մի նվեր, լինի դա թեկուզ երկու կամ երեք վիլայեթ, լիովին բավական է մի մուրացիկ ժողովրդի համար: Նրանք հակված են մոռանալու, սակայն, որ բռնի կերպ հայրենի երկրից վտարված հայերը իրենց տաղանդն ու աշխատասիրությունը դրսևորել են այնտեղ, որտեղ աշխատանքը անվտանգ է եղել, և զարգացրել են իրենց գործունեությունը համաեվրոպական մասշտաբով: Ոչ բոլորն են հաշվի առնում այն, թե ինչպիսի հոգևոր և նյութական գանձեր են կուտակել նրանք ոչ միայն իրենց հայրենիքի սահմաններում, Թիֆլիսում և Բաքվում, այլև հեռավոր Ռուսաստանում, Ամերիկայում ու Եվրոպայում: Հայերի ստեղծագործական ցրված ուժերը երկրում կենտրոնացնելու նպատակով պետությունը պետք է ապահովի այնպիսի պայմաններ, որոնք երաշխավորեն այս ուժերի ազատ ներհոսքը և կիրառվեն համաձայն նրանց չափի:

Հայաստանը կարիք ունի ոչ միայն աշխարհագրականորեն կլորացված սահմանների, այլև մշակութային դրացիության: Այն սահմանն է առավել կարևոր, որը ելք է բացում լեռնային կիրճից դեպի քաղաքակիրթ աշխարհ:

Այս հարցը արդեն դրվել և լուծվել է հայ ժողովրդի պատմությամբ: Հայերը միջանցք բացեցին դեպի Միջերկրական և այնտեղ հաստատեցին իրենց տիրապետությունը:

Դաս առած անցյալի փորձից, նրանք պնդում են, որպեսզի հայկական Կիլիկիան միակցվի Հայաստանին: Հայերի ձգտումները, սակայն, ընդդիմության են հանդիպում մեծ տերությունների կողմից, որոնք իրենք աչք ունեն Կիլիկիայի վրա: Հեշտ կլիներ հաշտվել նահանգի կորստյան հետ, եթե Ֆրանսիան, կամ անեքսիայի ենթարկելով և կամ իր ազդեցության ոլորտը գցելով այն, հարակից սահմաններ հաստատեր Հայաստանի հետ: Այդպիսի կորուստը կփոխհատուցվեր քաղաքակիրթ պետության սահմանակցությամբ:

Բայց ցավն այն է, որ, բացահայտորեն, մեծ հանրապետությունը գործում է ոչ դրդված իմաստությունից, այլ վատ տրամադրվածությունից հանդեպ մի փոքր և անօգնական թշնամու: Կիլիկիայից այնքան բռնակցեց, որքան համապատասխանում էր սեփական կարիքներին, և հենց այն մասը, որը միջանցք պետք է ծառայեր Հայաստանին: Ավելին, նա բարձրացրեց կամ հնարավոր համարեց բարձրացնել մի արհեստական պատնեշ իր և Հայաստանի միջև Քուրդիստանի սահմանագլխին, առավել ևս, որ այդ պատնեշը կառուցվում է մասամբ Հայաստանից կտրված հողերի հաշվին:

Երիտասարդ Հայաստանի երկունքը հղի էր այնպիսի դաժան տառապանքով, որ մենք ուժ չգտանք ուրախանալու նրա ծնունդով: Հայերը,

խորապես վշտահար, կարող էին որոշակի մխիթարություն գտնել այն մտածման մեջ, որ հարավում Հայաստանը վերջապես շփման մեջ էր մտնում երկար տենչած եվրոպական քաղաքակրթության հետ, որը Սիրիայում ներկայացնում էր Ֆրանսիան և Միջագետքում՝ Բրիտանիան:

Ինչ էլ որ լինեին Հայաստանին թելադրված հարավային սահմանները, ընդունելի կլիներ այն, որ սահմանաբաժան գիծը անցկացվեր Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի նոր ձեռք բերված տիրույթների դրացիությամբ: Ավելի լավ օգնություն չէին շնորհի Հայաստանին դաշնակիցները, քան նրա հարավային սահմանին բարձրացված այդ հզոր հենակետը: Ավելի լավ, քան մանդատը, որը նրանք փնտրեցին երկրի համար այնքան ստորացուցիչ ձևով:

Սակայն դաշնակիցների դիվանագիտությունը այլ կերպ գործեց և Հայաստանը դրեց անտանելի դրության մեջ: Երկիրը շրջապատվեց անքաղաքակիրթ մահմեդական պետություններ օղակով: Արևմուտքից Թուրքիայի և արևելքից Պարսկաստանի մերձավորությունը անբավարար թվաց, ուստի և թաթարական Ադրբեջանն ու Քուրդիստանը ստեղծվեցին հյուսիսում և հարավում:

Ամեն ոք գիտի, որ Քուրդիստանը ընկած է ոչ թե Եփրատից, այլ Տիգրիսից արևելք և տարածվում է մինչև Զագրոսի լեռները և այնտեղից էլ մինչև պարսկական Արդելան նահանգը: Եփրատից դեպի Արևելք Ուրֆայով և Մարդինով անցնող ֆրանսիական սահմանագծի երկարությամբ ընկած է ոչ թե Քուրդդիստանը, այլ հին Օսրոենան, Աբգարյան թագավորների երկիրը՝ Ուրֆա կամ Եդեսիա կենտրոնով: Այն պատվավոր տեղ է գրավում վաղ քրիստոնեության տարեգրություններում: Նույնիսկ հիմա, իր խայտաբղետ ագգաբնակչությամբ, այն ոչ մի կերպ կարող վերագրվել Քուրդիստանին:

Թուրքիայի, անդամահատման իր սխեմայում Ֆրանսիացի գրող Լյուդովիկոս դը Կոնտենսոնը Եփրատը միացնող այս հողերը հանձնում էր Հայաստանին: Ակնհայտ է, որ նա անհիրազեկ էր իր հայրենակիցների ախորժակներին, երբ այն գրգռվել էր հաջողությունից:

Իր հերթին հայերը գոհ կլինեին, եթե ֆրանսիական սահմանաբաժան գիծը Սիրիայում բարձրացվեր մինչև Տիգրիսին կամ Հայկական լեռնաշխարհի ստորոտներին կապվելը (միևնույն է, թե որտեղ): Այդ դեպքում երկուսն էլ՝ Սիրիան և Հայաստանը, երաշխավորված կլինեին և՛ աշխարհագրական, և՛ կուլտուրական սահմանակցությամբ:

Արևմուտքում՝ թուրքա-հայկական սահմանում, Սևրի պայմանագիրը (80-րդ հոդված) նախատեսում է սահմանաբաժան գոտի Հայաստանի և Թուրքիայի միջև: Քանի որ Քուրդիստանի տարածքը հասնում է Դերսիմ, այն ինքնըստինքյան սահմանափակում է այս գոտին մի նեղ հողաշերտով՝ Հայաստանի հյուսիս-արևմուտքում:

Եթե հայկական պետության սահմանները ճշտորեն սահմանազատված լինեին, նրա հյուսիս-արևմտյան սահմանը կանցներ, ինչպես նշվեց վերևում, Եփրատի աջ ափի երկայնքով, Մալաթիայից Արաբկիրի, Դիվրիկի և Գարահիսարի վրայով մոտավորապես մինչև Կիրասոն՝ Սև ծովի ափին:

Հյուսիսի և հարավի միջև հաղորդակցության գլխավոր կամ գրեթե միակ գիծը անցնում է այդ կետերով: Եփրատի ձախ ափի հողերի բնական պայմաններն այն անհարմար են դարձնում հաղորդակցության համար: Իր ստրատեգիական նշանակությունից զատ, վերոհիշյալ գիծը երկրի կյանքում խաղացել է, և դեռ խաղում է կարևոր դեր, լինելով միակ գլխավոր ճանապարհը, որը Հայաստանի վերին շրջանները միացնում է նրա հարավային գավառներին:

Սև ծովի ափից և մյուսն էլ Էրզրումից հարավ, դեպի Ստորին Հայք և

Միջերկրական կառուցվելիք ապագա երկաթուղիները հավանաբար պետք է անցնեն այս գծով: Այս ուղին պետք է դառնա Հայաստանի գլխավոր տնտեսական և առևտրական զարկերակը, որը նրա համար լայն հորիզոններ կբացի դեպի Սև ծով և Միջերկրական:

Այս գիծը պետք է ապահովվի Հայաստանին: Այդ դեպքում սահմանաբաժան գոտին պետք է հատվի Փոքր Հայքի հողերից Եփրատի աջ ափի համակարգում՝ Սվագի սանջակի սահմաններից, որը տրամադրված է Հայաստանին Խարբերդի և Դիարբեքիրի հետ միասին:

Վերջնական վճիռը կախված է մեծ իրավարարից՝ Միացյալ Նահանգների պրեզիդենտից: Ինչպե՞ս է նա գիտակցում իր խնդիրը: Իրավունք ո՞ւնի նա անցնելու Սևրի պայմանագրով իրեն շնորհված լիազորությունների սահմանը: Այդ բանը միայն ինքը գիտի: Եվ պետք է արդարացնի իր վրա դրված վստահությունը վիճաբանության ոչ ձևական, այլ սպառիչ ու արդարացի լուծմամբ:

Բոլոր դեպքերում, ոչ ոք չի կարող մերժել նրան սահմաններն ուղղելու իրավունքը, թեկուզ և միայն տերիտորիայի փոխանակությամբ: Համաձայն 90-րդ հոդվածի իմաստի, պրեզիդենտը լիովին լիազորված է Հայաստանին տրամադրելու բոլոր չորս վիլայեթները: Թվում է թե նա իրավունք ունի նաև պահանջելու՝ Հայաստանին միակցել Հայկական լեռնաշխարհի վերը հիշված մասերը սահմանային Սամսունի և Հաքքյարիի սանջակների հաշվին:

Խարբերդի սանջակը ընդգրկում է 10000 քառակուսի կիլոմետր տարածություն, նույն չափի տարածք է զբաղեցնում նաև Դերսիմի սանջակը: Արղանայի սանջակը ներառում է 8000 քառակուսի կիլոմետր, նույնքան էլ Դիարբեքիրի սանջակի հյուսիսային անկյունը: Հետևաբար, Հայաստանի պահանջած շրջանները կազմում են մոտավորապես 30000 մինչև 36000 քառակուսի կիլոմետր տարածք: Տրապիզոնի վիլայեթի արևմտյան կեսն ընդգրկում է 15000 քառակուսի կիլոմետրից ոչ պակաս տարածք, մինչև Հաքքյարիի հարավային մասը նույնպես 17000-ից պակաս չէ (ամբողջ սանջակը ընդգրկում է 25700 քառակուսի կիլոմետր տարածք): Այսպիսով, փոխանակման համար առաջարկված տերիտորիաները հավասար չափերի են, հետևաբար և բոլոր կասկածները, թե Հայաստանը տարածքային ընդարձակում է փնտրում, բացառված են:

Հայաստանի՝ սեփական բնական և պատմական սահմաններում հաստատվելու պահանջը արհամարհական ժպիտ է առաջ բերում որոշ քաղաքագետների ու հասարակական գործիչների մոտ, ովքեր կասկած են հայտնում հայ ժողովրդի մի այսպիսի ընդարձակ տերիտորիա կառավարելու ունակության մասին:

Մեր կողմից պայմանով որպես Հայկական լեռնաշխարհի վերապահված սահմանները զբաղեցնում են 200000 քառակուսի կիլոմետր տարածք, ներառյալ և՛ թուրքաց, և՛ ռուսաց Հայաստանը:

Հայերի թիվը, ներառյալ Թուրքիայից տարագրվածները, այժմ Անդրկովկասում հաշվվում է 2500000-ից ոչ պակաս, հաշվելով ոչ հայկական տարրերին մեկ միլիոն, Հայկական պետությունը այդպիսով պարունակում է 3 1/2 միլիոն ազգաբնակչություն:

Ավելի քան 200000 հայեր այժմ հավաքված են Կոնստանդնուպոլսում և նրա շրջակայքում: Ոչ պակաս քան 100000 մարդ կարելի է գտնել Սիրիայում և Կիլիկիայում: Հայ տարագիրների թիվն Ամերիկայում վաղուց անցել է հարյուր հազարից: Մենք չենք նշի հայկական գաղութները Բուլղարիայում, Եգիպտոսում և աշխարհի մյուս մասերում: Նրանց մի նշանակալի մասը, թեև վտարանդի, չի կտրել բոլոր կապերը հայրենիքից և անկասկած

կվերադառնա:
Եթե սահմանափակվելու լինենք վերը հիշված 3 1/2 միլիոն թվով, ապա, հավասարապես բաշխելով բնակչությանը, միջին
հաշվով կունենանք ոչ պակաս քան 17 մարդ, մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Ազգաբնակչության նման հավասար բաշխումը պետք է դառնա նոր կառավարության առաջնահերթ խնդուերից մեկը: Երկար ժամանակ է, որ Անդրկովկասի հայ ազգաբնակչությունը տառապում է սակավահողությունից և հարկադրված է եղել տարագրվելու Թուրքեստան, Սիբիր և անգամ Ամերիկա կամ աշխատանք փնտրել մեծ քաղաքներում՝ ամենից առաջ Բաքվում:
Այսուհետև հայկական գաղթականությունը պետք է ուղղվի դեպի Հայաստանի հարավը, առավել ես, որ նշանակալի քանակությամբ գյուղացիություն այստեղ էր գաղթել Թուրքահայաստանից 1828 և 1878 թվականներին: Ախալցխայի, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը բնակեցված են գաղթականներով, որոնք թողեցին Էրգրումի վիլայեթը 1828 թվականին: Նոր Բայազետի գավառը իր անունը ստացել է հին Բայազետից, որը, Ալաշկերտի հետ միասին, եղել է ներկա գաղթական ագգաբնակչության բնօրրանը: Ավելորդ ագգաբնակչությունը պետք է կրկին վերաբնակություն հաստատի Թուրքահայաստանի իր բնօրրանում:
Ինչպես արդեն նշվեց, հավասար տեղաբաշխումը կտա միջին հաշվով 17 մարդ ամեն մի քառակուսի կիլոմետրի վրա: Այս թվի նշանակությունը հասկանալու համար անհրաժեշտ է գաղափար կազմել Թուրքիայում ազգաբնակչության միջին խտության մասին: Այստեղ միջին թիվը 10-ից մինչև 15 բնակիչ է մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Այսպես, հաշվված է, որ Անգորայի կենտրոնական վիլայեթը ունի 892901 բնակիչ 83000 քառակուսի կիլոմետրի վրա, այսինքն մոտ տաս մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Իկոնիան՝ 91600 քառակուսի կիլոմետր, 1088000 բնակչությամբ, այսինքն նույնպես մոտ 10 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Առավել խիտ բնակեցված Զմյուռնիայի վիլայեթը ունի 1300000 բնակչություն 53000 քառակուսի կիլոմետրի վրա, այսինքն շուրջ 24 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա և այլն: Միջագետքում միջինը 5 մարդ է մեկ քառակուսի կիլոմետրի վրա:
Եվ ոչ էլ պետք է մոռանալ, որ Հայաստանը նման չէ Միջագետքին կամ Ասորեստանին, որտեղ հողի ամեն մի կտոր հարմար է մեծապես թանկարժեք կուլտուրաների մշակման համար: Հայաստանի ճիշտ կեսը լեռնային շրջան է, անհարմար՝ նույնիսկ անասնապահության համար: Անբաղաքակիրթ ժողովուրդների դարավոր տիրապետությունը ավերել է հողի մշակումը, և նույնիսկ այն բարձունքները, որոնք նախկինում ծածկված էին բուսականությամբ, այժմ լերկ ընկած են՝ լեռնային հեղեղների և անասունների կճղակների ներգործության պատճառով: Ներկա պայմաններում միջին հաշվով քառակուսի կիլոմետրի վրա 10-12 բնակիչը պետք է սովորական համարվի: Երկիրը չի կարող բավարարել ավելի մեծ թվով բնակչության, մինչև որ չկանգնի արդյունաբերական գարգացման ուղու վրա:
Ինչպիսին կլինի դրա հեռանկարը, դեռևս պարզ չէ: Երկրաբանների հայացքները տարբեր են Հայաստանի հանքային ռեսուրսների հարցում: Հանքեր հայտնաբերվել են միայն Հայական լեռնաշխարհի սահմաններին, որտեղ հարակից հովիտների լանջերին բացել են հանքային երակներ: Հանքաքարեր են հայտնաբերվել Արղանայում, Հայկական լեռնաշխարհի հարավային լանջերին և Գյումուշխանեում՝ հյուսիսային լանջերին,

արևելքում, Բազարչայ կամ Հայկական Օրոտն գետի հովտում ընկած են Կատարի հանքերը և վերջապես, Ալավերդու հանքերը Դեբետ գետի հովտում: Այս չորս մետաղաբեր շրջանները Հայաստանի չորս հանքարդյունաբերական կենտրոններն են: Առանց նրանց երկրի տնտեսական գարգացումն անհնարին է:

Այսպիսիք են Սևրի պայմանագրի առաջ բերած խոհերն ու փաստարկումները: Կան թերահավատներ և անհավատներ, ովքեր կասկածի տակ են առնում նորածին փոքր պետությունների հարատևությունը: Հայաստանը չի կարող դասվել նրանց շարքը, նախորդները ծնված են օտար արյունից, իսկ վերջինս՝ սեփական:

Դաշնակիցների դիվանագիտությունը պետք է ավելի ազնիվ լինի իր հարաբերություններում մի ժողովրդի հետ, որը վաղուց ի վեր որդեգրել է այն սկզբունքը, որ ազնվությունը լավագույն քաղաքականությունն է: Նրանք անկեղծորեն դրել են իրենց բախտը դաշնակիցների ձեռքը: Ամենևին էլ գաղտնիք չէ, որ Սևրի պայմանագրի թերությունները և տերիտորիալ սահմանագծման արատները սպառիչ բացատրություն են գտնում այն կասկածամտության կամ նախապաշարման մեջ, ըստ որի հայերը որոշ տերությունների կողմից դիտվում են որպես ռուսական կողմնորոշում ունեցող ժողովուրդ: Թվում է, թե ռուսական քաղաքականության հանդեպ հայերի թուլության դրոշմը նախախնամության կողմից չէ անջնջելիորեն խարանված նրանց ճակատին: Որևէ մի ժողովրդի համակրանքը ազդվում է կյանքի իրական պայմաններից, բայց ոչ ընդհակառակը—Vice versa. եթե այդ թուլոսթյանը պետք է հաղթահարվի, պետք է փոխվի նաև ժողովրդի քաղաքական գոյությունը:

Հայերի երեսը դեպի հարավակողմ դարձնելը ամբողջությամբ դաշնակիցների դիվանագիտության զորության մեջ է: Մինչդեռ վերջին երկու տարիների ընթացքում նրանց կասկածահարույց քաղաքականությունն Անդրկովկասում ամեն ինչ արեց ուժեղացնելու համար հայերին հիշտ հակառակ ուղղությամբ, այն է՝ ռուսական կողմնորոշման անխուսափելիության մեջ: Բացի այդ, Սևրի ընդարձակ սրահներում դաշնակիցներն ի զորու էին մեկընդմիշտ վերջ տալու հայկական ձգտմանը դեպի հյուսիս, խարխլելով դրա պատմական հիմքերը: Սակայն նրանք ավելի լավ բան չմտածեցին, քան սեղմելու Հայաստանը մահմեդական պետությունների շրջանակի մեջ և նրան կտրելու իրենցից՝ հարավում, Ռուսաստանից՝ հյուսիսում: Հայերը մաքառում էին ազատ և անկախ երկրի համար, բայց ոչ ցերեկվա լույսից փակ բանտի համար, բանտ, որին հսկում են թուրքերը, թաթարները, քրդերը և նրանց բարեկամները:

Վերջին խոսքը պատկանում է մի հզոր դեմոկրատիայի պրեդենտին: Նման իրավազորությունը խորհրդանշական է: Հայկական հարցը վաղուց դադարել է սոսկ հայկական լինելուց: Այն ժամանակակից մարդկության գիտակցության հարցն է: Հայերն արել են մարդկայնորեն հնարավոր ամեն բան հիմնավորելու սեփական տունը: Պատմությունը չգիտե ոչ մի ուրիշ ժողովրդի խնդիր, որն այդքան զոհաբերություններ արած լիներ հանուն ազատության: Ստրկության և նվաստացման անդունդից նա բարձրացել է վեհապանծ հերոսության և ինքնազոհության բարձունքները: Հայ ժողովուրդը դեռևս խեղդվում է արյունից և անհամբեր սպասում է անկողմնապահ իրավարացի վերջնական վճռին մի ակտի մասին, որը ստորագրել են դաշնակիցները՝ կանգնած մեկ միլիոն նահատակված հայերի դիակների վրա:

20 հոկտեմբերի, 1920
Լոնդոն

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ եւ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

«Ցարիզմը Փոքր Ասիայում: Հայկական հարցի ծագումը հոդվածի կապակցությամբ, տպագրված Revue poliyique international-ում, 1917, մարտ–ապրիլ: Ընթացիկ կարծիքը Թարքիայում հայկական հարցի ծագման վերաբերյալ, ինչպես արտահայտել է մի շնական մեկնաբան գայլի և գառան առակի օրինակով: Թուրքական պետական համակարգը որպես «Նիզամ արթընդա հայդուղ»: Բարեփոխամների փորձերը և նրանց ձախողման պատճառը: Տեղաբնակ ազգությունները որպես թուրքական կայսրության մշակութային և աշխատանքային հիմք: Էքսկուրս կայսրության քրիստոնեական և մահմեդական երկրները՝ պետական գանձարանի հանդեպ նրանց վերաբերությամբ: Թուրքիայում քրիստոնյաների, մասնավորապես հայերի, քաղաքակրթիչ դերը և կայսրությունը եվրոպականացնելու ու փրկելու համար նրանց օգտագործելու կորսված հնարավորությունը:Քաղաքական հորիզոնում ուրվագծվող և իրենց լուծմանը սպասող բազմաթիվ վիճելի հարցերից առանձնապես հայտնին և բարդը Մերձավոր Արևելքի հարցն է1: Մերձավոր Արևելքը այն կենտրոնն է, որի շուրջ պտտվում և բախվում են մեծ տերությունների համաշխարհային շահերը: Որպես այդպիսին այն անկասկածելիորեն դառնում է գլխավոր օղակը նպատակի շղթայում՝ համաշխարհային հեգեմոնիայի համար մղվող կռալիցիոն մեմարտում:

Հակառակորդների ագահ հայացքը երկար ժամանակ բևեռված էր մեռնող «հիվանդ մարդու» հարուստ ժառանգությանը: Շուրջ մեկ դար Թուրքիան, Պենելոպեի նման, շրջապատված էր երկրպագուների ամբոխով, որոնք տենչում էին նրա լքված հրապույրներին: Չունենալով վերջինիս առաքինությունները, նա պատրաստակամորեն հերթով իրեն առաջարկում էր ամեն մեկին, պայման դնելով, որ իր գոյությունն ապահովված լինի:

Հասարակաց գիտելիք է, որ եվրոպական հակառակորդները սատարում էին Թուրքիայի արհեստական գոյությանը և ապահովում էին նրա ամբողջականությունը, ոչ որովհետև, ապրող

մարմինը արժանի էր նման խնամքի, այլ բացառապես առաջնորդվելով «ուժերի հավասարակշռության» սկզբունքով: Հասարակ լեզվով ասած այս նշանակում է, որ բոլոր վիճող կողմերի պայմաններում մրցակցության առարկան իրեն գտնում էր կրավորական երրորդ կողմի դրության մեջ, որը թույլատրում էր նրան քարշ տալու ամոթալի գոյություն:

Այժմ, երբ համաշխարհային պատերազմը մոտ է լուծելու միջազգային քաղաքականության բոլոր հին պրոբլեմները, Թուրքիան չի կարող խուսափել պատմության մեջ իրեն արժանի ճակատագրից:

Թող երիտթուրք երազողները, սատար գտած իրենց զինակիցների հաղթական սվիններից, հույսեր փայփայեն վերականգնելու Թուրքիան իր երբեմնի փառքում: Անողոք իրականությունը շուտով կցրի նրանց պատրանքները: Նրանք իրենց բեռը վստահել են գերմանական նավին, որը երկար ժամանակ է, ինչ դեգերում է անարգել միջազգային նավագնացության փոթորկոտ ծովում: Շուտով նրանք կհամոզվեն, որ առաջին իսկ դժբախտության դեպքում, փոթորկի առաջին իսկ պոռթկումի ժամանակ թուրքական բալաստը ծով կնետվի:

Պատմության Նեմեսիսը և՛ փոփոխական է, և՛ անողոք հատկապես նրանց

հանդեպ, ովքեր, լիովին արհամարհելով իմաստությունն ու խիղճը, ոտնակոխ են անում նրա օրենքները: Որքա՜ն հաճախ է նա նետում հույսի հանկարծական շողշողուն, բայց վերջին ճառագայթ իր զոհերի վրա, որպեսզի արձակի առավել սոսկալի վերջնական դատավճիռ:

Թուրքիային սպասվող ճակատագիրը, ի բաց առյալ բոլոր լավատեսական բաղձանքները, Թուրքիան ինքն է պատրաստել իր համար: Այն կախված է երկու գլխավոր գործոնների կործանարար գործողությունից, որոնք սովորաբար դիտվում են որպես ներքին տարանջատում և արտաքին ճնշում: Այս երկու գործոնների միջև, որոնք ճակատագրական հիվանդության նման քայքայում են նրան, Թուրքիան գալարվում է անօգնականորեն, անուժ կասեցնելու նրանց քայքայիչ գործողությունը:

Այս զույգ գործոններն էլ, ընդունված է, որ կապված են Թուրքիայի քրիստոնյա հպատակների բախտի հետ: Այն պահից ի վեր, ինչ բալկանյան ժողովուրդները դեն նետեցին թուրքա-քրիստոնեական խառնաշփոթությունը, այն կարծիքն է տիրում, որ այս գործոնների քայքայիչ ագդեցությունը կենտրոնացած է Թուրքիայի հանդեպ ռուս-հայկական հարաբերություններում: Ռուսաստանը ներկայացվում է իբրև մի ծանրություն, որը ճնշում է գործադրում Թուրքիայի վրա հայկական լծակի միջոցով:

Այսպիսին է նրանց կարծիքը, ովքեր արտաքին վտանգը հասկանում են որպես տարածքային կորուստների հնարավորություն նշանակող վտանգ և բոլոր ազգային բաղձանքները դիտում են իբրև ներքին տարանջատողականություն: Նախ և առաջ, այս է բոլոր թուրքական ուլեմաների կարծիքը, եկեղեցական թե աշխարհիկ, հին թե նոր տիպի, այն է՝ որ դարեր շարունակ ռուսական վտանգը շեղել է Թուրքիայի ուժերը և արգելակել նրա գարգացումը, հայկական հուզումները խթան են ծառայել Ռուսաստանին իր լայն որովայնի մեջ կլանելու թուրքական արևելյան նահանգները, որոնց կորուստը խախտում է թուրքական կայսրության աշխարհագրական ամբողջականությունը Մերձավոր Արևելքում:

Այս տեսակետը ընդունվեց նաև Եվրոպայում, փաստորեն իր ծագումն առնելով Եվրոպայի քաղաքական աշխարհի այն մասի ազդեցության ներքո, որը գաղտնի կամ բացահայտ համակրում էր թուրքերին: Եվրոպայում նրա ժողովրդականության չափերի մասին կարելի է դատել այն փաստից, որ այն նույնիսկ Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիայում չէր անտեսվում, չխոսելով արդեն թուրքական գործերում Ռուսաստանի պատմական հակառակորդների մասին:

Պատերազմի ամենաեռուն պահին միջազգային քաղաքականությանը և համաշխարհային մշակույթին նվիրված մի ֆրանսիական պարբերական անդրադարձավ Թուրքիայի հետ ռուս-հայկական հարաբերությունների հարցին: Նման մի ժամանակ քննարկելով այս հարցը, հեղինակը հնարավոր համարեց վերաբերվել դրան այնպիսի մի ձևով, որը կարող էր հարուցել ամենավատթար տիպի թուրքական կամ գերմանական մամուլի նախանձը:

Այդ պարբերականի խորագիրն է «La Revue politique Internationale», որը հրատարակվում է Փարիզում 1914 թվականից: 1917 թ– մարտ-ապրիլ ամիսների համարում կա մի հոդված «Ցարիզմը Փոքր Ասիայում: Հայկական հարցի ծագումը» վերնագրով: Հեղինակի անունն է Մ. Էդգար Գրանվիլլ, որը անձամբ ինձ ոչինչ չի ասում, բայց որը և ոչ մի կերպ չի սքողում հոդվածի հետաքրքրականությունը, որը շատ առումներով մեծապես ուսանելի է:

Հոդվածի էությունը հետևյալն է. Մարդկության ներկա մեծ դրամայում, որը խաղացվում է մեր աչքի առջև, ռուսական ցարիզմը խաղում է ամենատխուր

դերը: Այժմ, երբ Ռուսաստանի դաշնակիցները ի վիճակի են ազատորեն քննադատելու անկյալ վարչակարգը, որը երեք դար շարունակ թունավորում էր Եվրոպայի մթնոլորտը, թույլատրելի է կանգ առնել և հանգամանորեն հայհոյել նրա արտաքին քաղաքականությունը: Այդ քաղաքականության գլխավոր շարժիչ ուժը շատ հեռու է բավարար չափով հայտնի լինելուց, չնայած անիրազեկ, թերևս մեծահոգի քաղաքագետների դրա շուրջ բարձրացրած աղմուկին: Խնդրո վերաբերյալ առարկան հայկական հարցն է: Համաշխարհային դրամայի նախապատրաստական պահերի մեջ հայկական հարցը ամենակարևորներից մեկն էր, որը բախման հանգեցրեց տերություններին: Այս հարցը չափից դուրս խառնաշփոթ հարց էր, և նրա հիմնական նշանակությունը պարզ էր միայն փոքրաթիվ դիտորդների, որոնք քաջածանոթ էին արևելյան գործերին: Բալկանյան տագնապի և համաշխարհային պատերազմի միջև ընկած կարճ ժամանակամիջոցում նրանք երկյուղով էին հետևում հայկական հարցին, կանխատեսելով, որ նրանում աճող վտանգ կա Եվրոպայի խաղաղության համար: Նման փորձագետների թվին է հեղինակը դասում, իհարկե, իրենից գատ, մի քանի անգլիացի պառլամենտականների, ովքեր 1913-1914 թթ. Համայնքների պալատում ռուս–հայկական հարաբերությունների վերաբերյալ վիճաբանությունների ընթացքում մատնանշել էին, որ ցարական կառավարության գաղտնի գործունեությունը Փոքր Ասիայում ամբողջ արևելյան ճգնաժամի աղբյուրն է, որը սպառնում է գործուն դեր ունենալ համընդհանուր աղետում:

Հեղինակը վկայակոչում է այս ապացույցը, որովհետև «մամուլի կողմից մոլորության մեջ գցված հասարակական կարծիքը ընդհանուր առմամբ բավական թույր և մանկամիտ գաղափար է կազմում արևելյան գործերի մասին: Նա հավատ է ընծայում գայլի և գառան մասին առակին՝ վայրագ և մոլեռանդ մահմեդականի, որը ժամանակն անցկացնում է հալածելով անմեղ և հրեշտակակերպ արևելյան քրիստոնյաներին: Եվրոպական առասպելը միայն մեկ մեղավոր կողմ գիտի՝ Իսլամը: Արևելյան քրիստոնյաները անմեղ զոհեր են և Ռուսաստանը՝ ուղղափառների հովանավորը, Արևելքի բոլոր ճնշված ազգությունների սիրագորով մայրն է: Այս ժամանակավրեպ առասպելի շնորհիվ հայերը ի վիճակի են եղել գրավելու քաղաքակիրթ աշխարհի բարոյական աջակցությունը, և միայն քչերն են նեղություն կրել հայտնաբերելու, թե արդյոք Արևելքում կատարվող խառնակությունների կուլիսներում չկա մի գաղտնի գործակալ, որը սեղմում է գաղտնի զսպանակները հօգուտ սեփական հատուկ շահի: Իսլամին բոլոր սխալների համար պատասխանատու դարձնելը հարմար էր նրանց համար, ովքեր բավարարվում էին տափակաբանություններով և չէին մտահոգված վերլուծել հարցը և իմանալ նրա ճշմարիտ նշանակությունը: Մարդիկ հազվադեպ էին կամենում պատկերացնել, որ թույնը, որ թունավորում է Արևելքը, արգելակում իսլամի զարգացումը և թուրքա-քրիստոնեական հարաբերությունների բարելավումը նույնական էր այն թույնի հետ, որով ցարիզմը թունավորում էր Ռուսաստանը և խորթացնում նրան ամբողջ Արևմտյան Եվրոպային: Ավելին քան մեկ դար Օսմանյան կայսրության քաղաքական բժիշկները հավատում էին իրենց խնամյալի անբուժելի հիվանդությանը, որի անխուսափելի մահը նրանք այնքան հաճախ կանխագուշակում էին: Նրանք չէին պատկերացնում, որ բուժման ամենահասարակ և առավել արդյունավետ մեթոդը օտար խարդավանքի թույնի հեռացումն է՝ անոսրացնելով այն ռուսական քաղաքականությանը տարբեր ոգով»:

Այսպիսին են ֆրանսիացի լրագրողի մտքերը, և նրանք լիովին բնորոշ են մի որոշակի վերաբերմունքի դեպի թուրքական կամ, այսպես կոչված, արևելյան հարցը: Չարիքի արմատը հետևաբար, ընկած է արտաքին, գլխավորապես ռուսական խարդավանքների մեջ: Չլիներ այդպես, Թուրքիան վաղուց ի վեր աճեցրած կլիներ իր փետուրները և հասած կլիներ եվրոպական քաղաքակրթության արշալույսին, որի երաշխիքը ընձեռում է իսլամի դեմոկրատական ոգին և անատոլիական հիլու գյուղացու պատրաստակամությունը՝ տեղի տալու քաղաքակրթիչ ազդեցությանը:

«Բոլոր փորձագետ արևելագետները Անգլիայում, ինչպես և մյուս երկրներում,— ասում է հեղինակը,— համաձայն են այն բանում, որ Ղուրանը ամենևին չի արգելում իսլամի քաղաքական հաստատությունների վերակազմակերպումը: Նրա ոգին էապես դեմոկրատական է և ընդունում է ամենաարմատական բարեփոխումներ, պայմանով, որ նրանք ընդունվեն մուսուլմանական քողի տակ և հրատարակվեն անկախ մահմեդական կառավարության կողմից՝ զերծ ամեն մի արտաքին ճնշումից: Անատոլիայի գյուղացու բնավորությունը, որի գովքը երգեցին ներկա պատերազմի ընթացքում նրա հետ շփման մեջ մտած բոլոր անգլիացիները, բացառում է խիստ մեթոդների անհրաժեշտությունը, որը պետք է կիրառել մյուս ժողովուրդների նկատմամբ, ովքեր ոտք են դնում բարեփոխումների ուղին: Նրա առասպելական հիլու հնազանդությունը թույլ է տալիս սպասելու, որ նա առանց դիմադրության կընդունի ամենախոր փոփոխությունները, եթե միայն նրան սովորեցնեն, որ ամենից շատ նա կարիք ունի գյուղատնտեսական տարրական գիտելիքների, որը նրա բարեկեցության էական պայմանն է»:

«Եթե ես պնդում եմ այս կետի վրա,— շարունակում է հեղինակը,— ապա այն պատճառով, որ հայկական հարցը միշտ Եվրոպայում դիտվել է դարավոր մահացու թշնամության լույսի տակ՝ «մոլեռանդ մուսուլմանների», ովքեր անզիջող են քաղաքակրթությանը, և հայկական ոգու միջև, ովքեր ձգտում են վերականգնել բարեկամական հարաբերությունները Արևմուտքի հետ, Փոքր Ասիայում հայերի առաջխաղացման պահից ի վեր: Նրանց փոխադարձ հակամարտությունը այլ բան չէ, եթե ոչ արտաքին խարդավանքի արհեստական և միայն վերջին ժամանակների պտուղ: Մի պարզ հայացքը թուրքա—հայկական հարաբերությունների վրա անցյալում բավական է ապացուցելու, որ երկու ազգություններն էլ ապրել են խաղաղ և բարի հասկացությամբ և ոչինչ չի եղել որ խորթացնի նրանց միմյանցից»:

Ես գրեթե ամբողջությամբ վկայակոչեցի ֆրանսիական պարբերականի զարգացրած գլխավոր դրույթը, որը կազմում է թուրքական հարցում հեղինակի տեսակետի հիմնաքարը: Այս մեկնակետերը կանխորոշում են հեղինակի հետագա հայացքները ռուս—հայկական և թուրք—հայկական հարաբերությունների նկատմամբ: Համաձայն հեղինակի, Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը և ռուսական դիվանագետների խարդավանքները Եվրոպայի հետևողական միջամտության հետ թուրքական գործերում միակ պատճառն են Թուրքիայի բոլոր աղետների և կիզակետը ամբողջ արևելյան և նրա հոգեզավակ հայկական հարցի:

Թեև հոդվածի բուն նյութը շատ հեռու է հեղինակի իրազեկությունից, էլ ավելի հնամաշ է նրա գաղափարը: Նրա հավակնությունները չեն համապատասխանում Հայաստանի ողբերգության հանդեպ այս մակերեսային և թեթևամիտ վարվեցողությանը: Այս արդյունք է Արևելյան հարցի նույնքան աղքատ որքան և հնացած տեսակետի: Գայլի և գառան «հնացած առակի» աղմկալից հերքումը սպասել էր տալիս, որ կհիշատակվեն

կանաչ արոտները, որտեղ գառը խաղաղորեն արածում է գայլի կողքին: Սա շատ ավելի դժվարին խնդիր է, քան թե նույն հին երգը նորից ու նորից երգելը, որը հեղինակը գերադասում է անել տհաճ նոտաներով:

Նրան պակասում է այն խորիմաստ ըմբռնողությունը, որ անհրաժեշտ է իջնելու համար դիվանագիտական գոռոզամիտ աստիճանից հարցի պատմական խորքերը, որպեսզի կռահի նրա ծագումը: Իսկ այս բանը չէր կարելի սպասել մի մարդուց, ով հնարավոր է համարում խարդավանքների մեջ փնտրել՝ գտնել մի պատմական երևույթի հիմքն ու բարձրակետը, որը ավելի քան մեկ դար է ինչ առեղծված է դարձել քաղաքակիրթ աշխարհի համար:

Պատմական կոնցեպցիայի բացակայությունը առավել քան ակնհայտ է դառնում հեղինակի վերաբերմունքից թուրք-հայկական հարաբերությունների հանդեպ: Նա դժվարությամբ է կարողանում տեսնել նույնիսկ տասնիններորդ դարի կեսերը և ի վիճակի չէ թափանցելու անցյալ դարերի խավարի մեջ: Եվ այդպիսով, հայկական հարցի ակունքների իր փնտրտուքում նրա մտորումները խարիսխ են նետում «ռուսական խարդավանքի հիմքի» վրա և անզոր են սավառնելու դեպի այնպիսի պատմական բարձունքներ, որոնք հնարավորություն տային նրան ըմբռնելու այն ողբերգությունը, որը ստեղծեց հայկական հարցը Թուքիայում: Միայն այդ դեպքում, դիվանագիտական մացառուտների ներքո, կկարողանա որևէ մեկը հայտնաբերել պատկան ճառագայթները, որոնց վրա հավասարապես ընկած են Հայաստանի ցավը և թուրքական պրոբլեմը:

Եթե մենք հանգամանորեն կանգ առնենք մեզ հետաքրքրող հարցի նկատմամբ այս մակերեսային վերաբերմունքի վրա, ապա ոչ այն պատճառով, որ այն արտահայտում է հեղինակի անհատական տեսակետները: Այս տեսակետներր ավելի քան ծեծված են, քան նրանք, որոնց դեմ հեղինակը բերում է իր փաստարկումները: Նրան պատկանում է միայն դրանց առավել գունավորված ցուցադրումը՝ անկասկած թուրքասիրական ոգով: Հնամաշ տեսակետները մատուցված են որպես հին կերակուր `ամենայն քնքշությամբ տաքացված թուրքական գգայունության համար: Ակամայից հարց է ծագում, արդյո՞ք երիտթուրքի ֆես չէ զարդարում այս ֆրանսիացի հեղինակի գլուխը:

Ես մեղքը ֆեսի վրա չեմ գցում պաշտպանական դիրք ընդունելու համար, ես ինքս այս հարցերին անդրադառնալու եմ մոտավորապես ճիշտ նույն օսմանյան պետական շահերի տեսակետից: Բայց ես հիմնվելու եմ պատմական ըմբռնողության հաստատուն հիմքի վրա, առանց դեգերելու դիվանագիտական խարդախությունների ոլորտում:

Արտաքին ճնշումը, որից գանգատվում է օսմանյան հայրենասերը, Թուրքիայի մասնատման պատճառը չէ, այլ պարզապես նրա վերասերման ցուցանիշն է: Տերությունների միջամտությունը պայմանավորված էր Թուրքիայի հիվանդագին դրությամբ և նրանց դիվանագիտությունը, շատ հեռու լինելով աղետների պատճառը լինելուց, ավելի շուտ ձգտում էր կարգավորել նման միջամտությունը:

Քաղաքակրթված երկրների արտադրողական ուժերի արտակարգ զարգացումը իր հարվածն ուղղում էր Թուրքիայի դեմ՝ համաձայն ուժերի բաշխման բնական օրենքի: Ինչպես լեփ-լեցուն ջրավազանի ջուրը թափվում է հարևան փոսը, այնպես էլ հագեցած եվրոպական միջավայրը փրկություն է որոնում նվազ արտադրողական երկրների ուղղությամբ: Այդ առումով սուլթանի կայսրությունը, փառք Ալլահին, մի դատարկ նավ է: Թուրքերը անսահման երախտապարտ պետք է լինեն այդ նույն եվրոպական

դիվանագիտությանը, որ կասեցրեց արտաքին գրոհը և մեկ դարով հետաձգեց Թուրքիայի քայքայումը՝ հռչակելով օսմանյան տիրույթների տերիտորիալ անձեռնմխելիությունը: Որպես միջազգային քաղաքականության պարտադիր սկզբունք, այս լոզունգը, սակայն, կորցրել էր իր հրամայական տոնը: Ռուսաստանի ներկա դրությամբ, որի կրծքին էր այն ուղղված, կորցրել է իր պատմական հիմքը: Այսուհետև Թուրքիայում status quo պահպանելու վերաբերյալ բոլոր նկատառումները պետք է դեն նետվեն և «հիվանդ մարդու» ճակատագիրը պետք է ի վերջո լուծվի:

Թուրքիայով շահագրգռված տերությունների քաղաքականությունը, գլխավորապես հիմնված նրանց տնտեսական շահերի վրա, այս նոր փուլամ պետք է ընդունի քաղաքական օրինականության որոշակի աստիճան: Մինչ Թուրքիան դիտվում էր սոսկ որպես էժանագին ապրանքների շուկա, նրանք, ում այն վերաբերում էր, կարող էին, և անբավարար ուշադրություն էին դարձնում Թուրքիայի ներքին դրությանը: Բայց այժմ սուլթանի տիրույթների կարիքն զգացվում էր ոչ միայն որպես շուկայի այլև որպես կապիտալի և արտադրողական աշխատանքի ներդրման ասպարեզի՝ շահագործելու համար մինչև հիմա անձեռնխելի մնացած բնական հարստությունները: Հետևաբար, երկրի ներքին դրությունը չի կարող այլևս անտարբերությամբ դիտվել, որոշակի չափի կարգ ու կանոն պետք է հաստատվի որպես ամեն մի ձեռնարկուղականության նախապայման:

Թուրքիան այնքան հեռու է մնացել պետության ժամանակակից կոնցեպցիայից, որ նրա բուն իսկ գոյությունը քաղաքակիրթ աշխարհի հետ կողք-կողքի ինքնըստինքյան անոմալիա է: Նա շատ քիչ ընդհանուր բան ունի եվրոպական պետականության հզոր կառուցվածքի հետ: Թուրքիան միշտ եղել է և այժմ էլ մնում է զինվորական վրան՝ որին պահում են տիրանիայի ու բռնության ձողերը: Երբ վստահաբար են տրամադրված լինում, թուրքերն իրենք իրենց կարգը բնութագրում են իբրև «նիզամ ալթընդա հայդուդ», այսինքն՝ կազմակերպված կողոպուտ, սահմանում, որը հենց վերջերս հաստատվեց նրանց գերմանացի բարեկամների կողմից2:

Սահմանադրությունը ոչ մի իրական փոփոխություն առաջ չբերեց վարչակարգում, ճիշտ ինչպես որ գլխարկը չի փոխի «սոֆտայի» գիտությամբ լցված թուրքի գլուխը: Ոչ մի եվրոպացի և ոչ էլ, իհարկե, կուլտուրական շնորհներով օժտված աշխատող չի կարող դիմանալ՝ ապրելու թուրքական ճնշման մթնոլորտում: Եթե Եվրոպան ցանկանում է օգտագործել թուրքական տիրույթները, նա պետք է ձգտի բարեփոխել Թուրքիան, այնտեղ կարգուկանոն հաստատել, որոնք կերաշխավորեն ինտենսիվ արտադրության հնարավորություն և ազատություն: Բարեփոխումները պետք է նախորդեն կամ առնվազն կողք-կողքի քայլեն Թուրքիայում՝ եվրոպական կապիտալի և աշխատանքի առաջխաղացման հետ միասին: Սակայն հնարավո՞ր է թուր քական կարգի բարեփոխումը եվրոպական

---

2 Das Turkische Reich, von Molbeck, Chesney and Michelsen, p 281.

դիվանագիտության մինչև հիմա առաջադրած հիմունքներով:

Նրանք, ովքեր Թուրքիան լավ գիտեն, երկար ժամանակ է ինչ այն նմանեցնում են կիսախարխուլ մի կառույցի, որը գտնվում է փլուզման ու խորտակման եզրին ոչ միայն սեփական բնակիչներից, այլև անցորդներից: Ավերումը կարելի էր կանխել ժամանակավոր վերանորոգմամբ: Սակայն Թուրքիայի վերանորացման բոլոր ժամկետները կորսվեցին: Այժմ, բարեփոխումների մուրճի վերջին հարվածից ամբողջ կառույցը խորտակվելու և հողին է հավասարվելու:

Միակ դեղամիջոցը մնում է կառուցվածքը, հիմքը և մնացյալ ամենը մաքրելը և բեկորներից մի նոր շինություն կառուցելը: Թուրքերն իրենք կատարելապես պատկերացնում են իրենց այս դրությունը: Նրանք բնազդորեն դիմադրում են բարեփոխումների բոլոր փորձերին, գալիս լինեն դրանք ներքին ուժրից, թե արտաքին ճնշումից: Ուղղափառ օսմանի համար Թուրքիայի բարեփոխումը նման է վիրաբույժի դանակի՝ անատոմիական սրահում: Թուրքական ռեֆորմների պատմություն տխրահռչակ «թանզիմաթով» բերում է այն վերջնական համոզմանը, որ Թուրքիայում բոլոր ստեղծագործական ջանքերը ապարդյուն են: Լայնածավալ բարեփոխումների մեծադղորդ հռչակումը և պետության կառավարման արվեստի եվրոպական սկզբունքների ընդունումը, մի կողմ թողած դրանց անկեղծության հարցը, սկզբից ևեթ ուղեկցվեցին խոսքից գործի անցնելու պրակտիկայում արմատական միջոցառումներ անցկացնելու բացարձակ անկարողությամբ:

Սուլթան Աբդուլ-Մեջիդը և Ռեշիդ փաշան՝ «թանզիմաթի» հեղինակը, կամ հռչակավոր Միդհատ փաշան՝ սահմանադրական վարչակարգի կողմնակիցը, անկասկած լի էին բարի մտադրություններով և ուզում էին իրենց երկիրը առաջնորդել դեպի առաջադիմության ուղին: Բայց նրանց շանքերը խորտակվեցին՝, բախվելով թուրքական քարացածության ժայռերին: Բարեփոխումներ կատարելու բոլոր փորձերը դիտվում թին որպես հայրենի քաղաքական կառուցվածքի սկզբունքների դեմ ուղղված ոտնձգություն: Ինչպիսի բացատրության էլ որ առաջարկվի թուրքական անշարժության վերաբերյալ, փաստը մնում է ակնհայտ:

Անարդարացի կլիներ, թուրքական կայսրության հետամնացության համար մեղքը գցել (ինչպես որ այդ հաճախակի է արվում) քաղաքականապես տիրապետող թուրքական տարրի մտավոր պակասությունների վրա: Թուրքական ռասայի բնութագրությունը միշտ չէ, որ կարելի է գտնել ժամանակակից օսմանցիների մոտ: Պատմության մեջ թուրքական ցեղերը ներկայացված են որպես ավերասփյուռ և խորտակիչ տարերային մի ուժ: Մոնղոլիայի տափաստաններից մինչև Ադրիատիկի ափերը այս պատմական կործանարարները սլացան ինչպես մրրիկ՝ ավերելով իրենց սահմռկեցուցիչ և հաղթական առաջխաղացման ճանապարհին քաղաքակրթության պտուղները, որ ձեռք էին բերել եվրոպական ազգերը դարերի տքնությամբ: Նրանց հետքերը խորհրդանշվեցին մոխիրներով ծածկված և արյամբ ներծծված ծխացող ավերակներով: Նրանց մասին լավ կլինի ասել, որ՞ նրանք անցան դարերի միջով, ինչպես մի չարազույժ ամբոխ՝ հետևորդներին չթողնելով ոչ մի բարեբեր ուղերձ, ոչ էլ հանճարի մի զործ:

Այս ճշմարիտ վանդալիզմը նույնպես հատկությունն որ օղուզ թուրքական այն ցեղի, որը բախտ ունեցավ տիրանալու Բյուզանդիայի մեծ ժառանգությանը: Չնայած իր ռասայական բնավորության կայունությանը, այսօրվա թուրքը նշանակալիորեն տարբերվում է իր նախնիներից: Ամենատարբեր ծագման տեր տարատեսակ էթնիկական զանգվածի, որը բնակվում էր Արևմտյան Ասիայում, միաձուլման պրոցեսը դեռ այժմ էլ տեղի է ունենում և չի սահմանափակվում գոյություն ունեցող տարբեր ազգություններով: Շատ ուրիշ տարրեր էլ են կուլ գնացել նրան: Ժամանակակից թուրքը մի տեսակ էթնիկական խառնուրդ է, որի երակներում օղուզական արյան տոկոսը մոտավորապես նույնքան է, որքան հունգարացունը արյունն է բուն այն ուգրների, որոնք վաղեմի ժամանակներում թափառում էին հարավային Ռուսիայի տափաստաններում: Օսմանը կամ թուրքի արեմտաասիական տիպը,

չնայած որքան էլ զանազանվի տարբեր վայրերում, որտեղ այն կախված է միաձուլված օտար արյունից, շատ և շատ է հեռացել իր նախասկզբնական թուրքական նախատիպից: Այն մեծապես փոփոխվել է և ազնվացել իր նախնիների համեմատությամբ, որոնց սարսափազդու մոնղոլական դիմագծերը ահ ու զզվանք էին ներազդում: Վերոհիշյալ նկատառումները բացառում են ամեն մի լուրջ փորձ՝ վերագրելու Թուրքիայի ներկա կացությունը թուրքի բնական դանդաղկոտությանը:

Հավասարապես անարդարացի կլինի մեղադրել իսլամը որպես մի ուսմունք, որն ընդդիմադիր է առաջընթացին: Իսլամն ամբողջովին պատասխանատու դարձնելը մուսուլմանական պետական իշխանությունների այլասերվածության համար նույնքան աններելի կլինի, որքան որ միջնադարյան պապականության արատները Քրիստոսի ուսմունքին վերագրելը: Ամենուրեք արիստոկրատիան դրսևորում է կրոնի մեջ աջակցություն փնտրելու, թեոկրատիա դառնալու նույն միտումը: Նրա հաջողությունը չափվում է կրոնական ինքնագիտակցության ստանդարտով և տվյալ հասարակության մտավոր ընդհանուր զարգացմամբ: Իսլամը կարող է պատասխանատու համարվել Թուրքիայի ճակատագրի համար այնքանով, որքանով այն մի կույր գործիք է դարձել կառավարության ձեռքին և որպես այդպիսին գործել ինչպես մի արգելք ամեն մի առաջադիմության ճանապարհին: Սուլթանի կառավարությունը կառչել է նրանից և օգտագործել այն որպես մի ծածկույթ, սքողելու համար բոլոր սեփական թերությունները: Անսխալականության և սրբազանության զուտ կրոնական սկզբունքը հիմք է կազմել ոչ միայն կրոնական, այլ նաև քաղաքական ու հասարակական հաստատությունների համար: Հետևաբար, պետական վարչակազմի մեջ որևէ մի փոփոխություն դիտվել է որպես կրոնի դեմ ուղղված ոտնձգություն: Բոլոր բարեփոխումները և բարեփոխումների կողմնակիցները իրենց կրոնական տգիտության մեջ խորասուզված ուղղափառ մահմեդականների աչքում կասկած են հարուցել իրենց նկատմամբ, որպես պետական համակարգի ընդդիմադիրներ:

Տգիտության ամենավատթար տեսակի, այն է՝ դեպի մոլեռանդության տանող կրոնական խավարամտության վրա հիմնված օսմանյան կառավարությունը պահպանում է իր բացարձակ գոյությունը ի վնաս երկրի բնական զարգացման:

Ինչ որ չափով համանման էր Եվրոպայի դրությունը հռոմեա-կաթոլիկական միջնադարում: Նա դուրս պրծավ իր կյանքի այդ փուլից ռեֆորմացիայի հնոցի միջով, որը ազատագրեց կրոնական մտածողությունը նրա բոլոր խորթ կուտակումներից:

Արևմուտքում ռեֆորմացիան հռչակվեց Վերածնության կողմից, որը ազատագրեց մարդկային միտքը կապանքներից և ուղի հարթեց կրոնական ազատագրության համար: Բոլոր կրոնական կոնցեպցիաներն իրենց էությամբ պահպանողական են, և այդ կրկնակի ճշմարիտ է իսլամի համար: Այստեղ ռեֆորմացիա հնարավոր է միայն եվրոպական քաղաքակրթության ազատագրող ոգու ճնշման տակ: Ժամանակակից Թուրքիայում, հետևաբար, իսլամը ներկայացնում է մի հետադիմական սկզբունք, որը խոչընդոտում է ռեֆորմացիայի ներմուծումը: Մյուս կողմից, իսլամը կարող է դառնալ առաջընթացի լծակ միայն այն պայմանով, որ ինքը բարեփոխման ենթարկվի եվրոպական մշակույթի ազդեցության ներքո:

Այսպիսով իսլամը, թուրքական պետության հետ միասին, որին նա պաշտպանում է, պարզ գոյություն են քարշ տալիս այս արատավոր շրջանակում: Ելքը պետք է գտնել Թուրքիայի պատմության մեջ:

Թուրքական կառավարողները բարեփոխումների նպատակով կարող էին օգտագործել այն էթնիկական նյութը, որը կազմում էր թուրքերի նվաճած կայսրության մշակութային և տնտեսական հիմքը և որը նույնը մնաց նրանց տիրապետության ներքո: Ես խոսում եմ Թուրքիայի ոչ մահմեդական ազգությունների մասին: Նրանք պետք է աղբյուր ծառայեին փոխանցելու համար Եվրոպական քաղաքակրթությունը թուրքական իրականությանը: Այստեղ մենք շոշափում ենք «հիվանդ մարդու» թույլ տեղը: Ներկա պահին չափազանց դժվար է հաղթահարել թուրքական պետության պատմության մեջ քրիստոնյա ազգությունների նշանակության մասին նախապաշարյալ և սխալ տեսակետները: Դժբախտաբար այս տեսակետը նմանորեն պաշտպանում են թուրքերը և եվրոպական դիվանագետները:

Համաձայն լայն տարածում գտած կարծիքի, քրիստոնյա ազգությունները դիտվում են որպես հակամարտ ուժեր, որոնք միշտ պատրաստ են պայթեցնել և հօդս ցնդեցնել թուրքական կայսրությունը: Նման տեսակետը զարգացվեց վերջին դեպքերի կապակցությամբ, որոնք առաջ մղեցին կամ ռեֆորմների միջոցով Թուրքիայում քրիստոնյա ազգությունների դրությունը բարելավելու կամ նրանց անտանելի լծից լիովին ազատագրելու հարցը: Քրիստոնեական շարժումը, որը շատ վաղուց է սկիզբ առել, եթե ճիշտ վերաբերմունքի արժանանար կառավարության կողմից կարող էր ազդակ ծառայել ընդհանուր վերակառուցման համար: Հենվելով քրիստոնեական տարրերի վրա, որոնք ավելի հարմարվող են ժամանակակից ազդեցություններին, թուրքական պետական գործիչները կկարողանային բարձրացնել իրենց երկիրը քարացածությունից և նոր ողի ներշնչել նրան: Սակայն, ճակատագրականորեն թյուրընկալմամբ, թուրքական կառավարողները գերադասեցին ամեն մի առաջընթաց և նոր կյանքի բնական տենչանք ճնշելու առավել դյուրին ուղին: Նրանք այսպիսով խորթացրին իրենցից ու կորցրեցին քրիստոնյա ագգաբնակչության վստահությունը և քանդեցին կայսրության պատմական հիմքերը:

Թուրքական կառավարության գլուխ կանգնած անձինք անընդունակ էին հասկանալու այն կենսական դերը, որ խաղացել էին քրիստոնյա ազգությունները թուրքական պետության կառուցման գործում: Այս փաստերը առաջնակարգ կարևորություն ունեն: Նրանք, ովքեր լիովին չեն ըմբռնել դրանց նշանակությունը ամբողջ թուրքական հարցի կապակցությամբ, բնավ երբեք չեն հասկանա սուլթանի կայսրության բարձրացման և անկման իրական պատճառը:

Տարրական գիտելիք է, որ ամեն մի պետություն, առանձնապես մի այնպիսի հզոր, զուտ ռազմական պետություն, որպիսին էր Թուրքիան այն ժամանակ, ամենից առաջ կարիք ունի լայն նյութական ռեսուրսների: Սրանք մատչելի էին միայն ընդհանրապես երկրի կուլտուրական զարգացման և բարեկեցության որոշակի ստանդարտի առկայության պայմաններում: Ի վիճակի՞ էին օսմանցի հովիվները, որոնք թափառում էին իրենց հոտերով և նույնիսկ դեռ այսօր էլ պահպանել են իրենց վաչկատուն սովորությունները, ստեղծելու նյութական և հոգևոր արժեքներ, որոնց կարիքը ուներ պետությունը:

Օսմանցիները հավաքեցին մյուս ժողովուրդների աշխատության պտուղները, նրանք օգտագործեցին դարերի ընթացքում դիզված հարստությունը, որոնք ժառանգել էին այն ազգություններից, ովքեր կառուցել էին Բյուզանդիա կոչված քաղաքակրթության վեհապանծ տաճարը: Թուրքերի և՛ ռազմական փառքը, և՛ տիրապետությունը անհնարին կլինեին, չլիներ երկրի դրամական հարստությունը և չլինեին

արտադրողական ուժերը, որոնք ներկայացնում էր նրա բնիկ քրիստոնյա ազգաբնակչությունը:

Սելիմ Աիեղը, Սուլեյման Փառահեղը, որքան էլ մեծ լիներ նրանց ռազմական հանճարը և թուրքերի մարտական արժեքը, կարող էին հայտնվել մի գետնի վրա, որը պարարտացված էր դարերի քաղաքակրթությամբ: Թուրքական ցեղերի ռագմական կազմակերպող ընդունակությունները չեն կարող ժխտվել: Ինչպես որ սերմի սոսկ որակը դեռևս չի կարող երաշխավորել նրա հաջող աճը, քանի դեռ նա բարենպաստ հողի մեջ չէ ցանված, այնպես էլ թուրքական ռազմական տաղանդը չէր կարողանա ծաղկել, չունենալով այն տնտեսական և կուլտուրական հիմքը, որը նրա հզոր զարգացման պայմաններից մեկն էր:

Պատմության հեռավոր ժամանակներում, զանազան վայրերում, թուրքերը ջանացել են հիմնել տարբեր պետություններ, բայց նրանցից ոչ մեկը հզոր կամ կայուն չեղավ: Նրանց հաջողվեց ստեղծել աիարկու համաշխարհային տերություն միայն բյուգանդական քաղաքակրթյալ աշխարհի սահմաններում: Այս անկասկած, շնորհիվ օսմանցիների էր, որոնք ազգակից ռասաների մեջ ամենաօժտվածն էին:

Նրանց հաջողության զաղանիքն ընկած է այն անսպառ հարստության մեջ, որը կուտակվել էր բյուգանդական ժողովուրդների ստեղծագործ աշխատանքով և որը թուրքերը մսխեցին շռայլորեն ու անխոհեմաբար: «Թուրքերը բնավ երբեք որևէ բան չեն արտադրել»,— ասում է Թուրքիայի պատմաբաններից մեկը: «Նրանք ոչինչ չեն ստեղծել, հետևաբար նրանք մսխել են բոլոր այն հարստությունը, որը կուտակել էին նրանց նվաճած ժողովուրդները և հասել են աղքատության այնպիսի դրության, որն ակնհայտորեն դեռ չի հասել իր վերջին խորությանը»:

Թուրքական տարրը եղել է և դեռևս է մի զինվորական կաստա ու կազմում է կայսրության ռազմական հզորության հիմքը: Քրիստոնյա ժողովուրդները և ոչ մահմեդական ազդաբնակչությունն ընդհանրապես կազմում է մի աշխատավորական զանգված կայսրության տնտեսական և ֆինանսական զորության գլխավոր աղբյուրը:

Ինչ վերաբերում է ռազմական հարցերին, սակայն, կա մի լուրջ վերապահություն: Ճիշտ է, որ օրենքով քրիստոնյաներին արգելված որ ծառայել բանակում, բայց փաստորեն նրանք ավելի ծանր բեռ էին կրում, քան իսլամի հետևորդները: Ինչպես հայտնի է, նվաճող թուրքական բանակի զլխավոր ուժը կազմված որ ենիչերիական գնդերից: Բայց ինչը որ կարող է հայտնի չլինել ընդհանրապես այն է, որ այս գնդերը կազմվում էին քրիստոնյա տղաներից, որոնց ժաժանորեն պոկում էին ծնողներից և դաստիարակում որպես մահմեդականների: Այս զորահավաքը, որը հայտնի էր «դևշիրմե» հատուկ տերմինով, անցկացվում էր հույների, հայերի, բուլղարների, բոսնիացիների և առնաուտների միջև: «Բոլորը, ովքեր ծնվել են, ծնվել են իսլամի համար»,— հռչակում է թուրքական ասացվածքը: Դժբախտ քրիստոնյա մանուկները այնպիսի դաժան կարգապահության էին ենթարկվում, որ դառնում էին «ինչպես վերահալված արծաթ», եթե օգտագործելու լինենք 17-որ դարի թուրք գրող Խոջա-բեյի արտահայտությունը, որը հեղինակել է մի աշխատություն թուրքական կայսրության անկման պատճառների մասին: Ենիչերիների գնդերը կազմակերպվեցին սուլթան Ուրխանի՝ օսմանյան հարստության հիմնադրի հաջորդի գահակալության օրոք: Հետևաբար, ենիչերիները գոյություն ունեին թուրքական պետության հենց սկզբնավորումից: Նրանք նոր ժամանակների առաջին կանոնավոր հետևազորն էին, նրանց էր նվաճող

թուրքական բանակը պարտական իր աննախընթաց հաջողությունները: Ակնհայտ է, որ նույնիսկ ռազմական կազմակերպության մեջ քրիստոնեական տարրը կազմել է «ռազմատենչ» թուրքերի ուժի գլխավոր աղբյուրը:

Եթե քրիստոնյա ժողովուրդները նման էին «վերահալված արծաթի» ռազմական գործերում, ապա հասարակական և տնտեսական կարգի հարցերում նրանք նման էին զուտ ոսկու: Այս սկգբունքը արդարացվում է ոչ միայն պատմական բնույթի նկատառումներով, այլև բացարձակապես օբյեկտիվ տվյալներով, ինչպես կտեսնենք ստորև: Թվում է, թե դա պետք է կազմեր որոշակի պետական քաղաքականության հիմքը: Քրիստոնյաների հովանավորությունը, լինելով հավասար պետական գանձի ապահովության, պետք է կազմեր ներքին քաղաքականության հիմնաքարը: Չնայած դրան, օսմանյան կառավարությունը, անընդունակ գտնվելով ըմբռնելու այս պարզ աքսիոման, դարեր շարունակ հետևեց մի քաղաքականության, որը հավասապես ճակատագրական եղավ սեփական պետության համար, ինչպես որ էր այն քրիստոնյաների համար: Այս քաղաքականությունը և նրա հետևանքները լավագույնս լուսաբանվում են հետևյալ պատմական վկայակոչմամբ:

Թուրքական տիրույթներն Արևմտյան Ասիայում կազմված են Անատոլիա, Հայաստան, Սիրիա, Քուրդիստան և Արաբա-իրաքյան պրովինցիաներից: Այս երկրների քրիստոնյա ազգաբնակչությունը, թուրքական գավթումից և՛ առաջ, և՛ հետո բաժանված էր հույն, հայ և ասորի ազգություններին պատկանող երեք բնիկ խմբերի: Այս երեք խմբից յուրաքանչյուրը, մինչ ուներ իր հատուկ մայր երկիրը և մետրոպոլիսը, բայց և այնպես սփռված էւ՝ իր ամբողջ Արևմտյան Ասիայում՝ Բաղդադից մինչև Կոստանդնուպոլիս:

Անհրազեկ անձինք հաճախ պնդում են, որ Փոքր Ասիայի քրիստոնյա ազգությունները թուրքերի համեմատությամբ նորեկներ են: Վիտալ Քինեն, Ասիական Թուրքիայի վերաբերյալ ծավալուն, բայց, դժբախտաբար, շատ պակասավոր աշխատության հեղինակը, բովանդակությամբ, գովասանքի արժանի էքսկուրսներ է կատարում պատմության բնագավառը: Անատոլիական մարզերի հայերի վերաբերյալ նա հայտարարում է, որ նրանք գաղթել են այդ կողմերը առաջին Սեֆյանների օրոք, գլխավորապես Շահ Աբբասի գահակալության ժամանակ, այն է՝ 17-րդ դարի սկզբին: Նույն տեսակետն է նա պաշտպանում Բրուսսայի և Իզմիրի հայերի կապակցությամբ:

Հայտնի է, սակայն, որ արդեն թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի նվաճման ժամանակ, 15-րդ դարում, Բրուսսան հայ եպիսկոպոսի նստավայր էր և այդ եպիսկոպոսը հռչակվեց բոլոր Փոքր Ասիայում ապրող հայերի գլուխ: Ադրամեդայում, որը ծայրագույն սահմանն էր խաչակրաց արշավանքների ժամանակ, շուրջ 30 հազար հայեր միացան խաչակիրներին: Մենք ի վիճակի ենք հաստատելու, ի շահ Քինեի և նրանց, ովքեր բաժանում են նրա տեսակետը, որ ամբողջ Փոքր Ասիա թերակղզում գոյություն չունի ոչ մի կետ, որտեղ հայերը բնիկ բնակիչներ չլինեին թուրքերի առաջխաղացումից շատ և շատ առաջ:

Քինեի տեսակետը կարելի է միայն ընդունել այն իմաստով, որ Փոքր Ասիայի հայ ազգաբնակչությունը մշտապես վերանորգվում էր գաղթականության թարմ հոսանքներով՝ Հայաստանի բուն նահանգներից: Անհրաժեշտ է ավելացնել, սակայն, որ նրանք բռնի արմատախիլ էին արվում իրենց տներից թուրքական կառավարողների կողմից և ուղարկվում Անատոլիայի խորքերը, որպեսզի բարելավեն նրա տնտեսական գարգացումը:

Քրիստոնյա, ավելի շուտ ոչ մահմեդական ազգությունների կողմից Անատոլիայի գաղութացումը հառնում է մինչև Բյուզանդիայի օրերը: Վերոհիշյալ երեք խմբերը կազմում էին բյուզանդական կայսրության էթնիկական հիմքը: Բյուզանդիայի պատմական ծառայություններից մեկն էլ այն է, որ դա առաջին պետությունն որ, որը ամենատարբեր ծագում ունեցող ազգությունների բարեկամական համագործակցության առաջին օրինակը տվեց, ազգություններ, որոնք միավորվել էին ընդհանուր պետության կառուցման գործում:

Մտնելով այս ազդեցիկ շինությունը, թուրքերը պարզապես ապացուցեցին ոչ միայն իրենց անկարողությունը շարունակել իրենց նախորդների քաղաքակրթիչ խնդիրը, այլև, առակի կենդանու նման, սկսեցին կտրել այն հզոր ծառի բուն արմատները, որի պտուղը նրանց իսկ գոյության և բարեկեցության աղբյուրն էր: Կրոնական տարբերությունների սկզբունքի վրա հիմնված քաղաքականությունը երկիրը բաժանեց մահմեդականների և ոչ-մահմեդականների երկու թշնամական ճամբարների: Նրանց փոխադարձ թշնամությունը արհեստականորեն բորբոքվեց և վերածվեց բոցի:

Ճշմարիտ է, որ հարաբերությունները վաչկատուն նորեկների և մի հին քաղաքակրթության նստակյաց տարրերի միջև չէին կարող առանձնապես բարեկամական լինել: Կառավարության խնդիրը պետք է լիներ հաշտեցնել այս բնական տարաընթացությունները և վերացնել հակասությունների սուր եզրերը այս անհավասար արժեքներ ունեցող ուժերի միջև: Թուրքական կառավարողները, սակայն, իրենց բարեկեցությունը փնտրեցին բնակչության այս երկու գործոնների հակամարտության մեջ: Նրանց օտարոտի էին կառավարման այն տարրական սկզբունքերը, որոնք մատնանշում էին նրանց երբեմն-երբեմն առավել լուսավորյալ թուրքերը: «Մեր քաղաքական իմաստուններին,- ասում է Ահմեդ Ռեսմի Էֆենդին,— Ալլահը ոչ խելք է շնորհել, ոչ էլ փորձառություն: Պատմության ուսումնասիրությունը նրանց գործը չէ: Հետևաբար նրանց համար որոշակի է, որ մահմեդականի առաջնահերթ և ամենասրբազան պարտակա-նությունն է բոլոր անհավատների վերացումը երկրի երեսից»3:

Քրիստոնյա հպատակների հալածանքը, վերջիններիս ստրկական դրությամբ հրահրված բոլոր հետևանքներով, կարելի է դիտել Թուրքիայի ամբողջ պատմության ընթացքում, որպես թուրքական կառավարության բացահայտ կամ գաղտնի նպատակ: Յուրաքանչյուր այսպիսի կառավարության տարրական սկզբունքը պետք է լիներ ենթադրաբար հավասար վերաբերմունքը իր բոլոր հպատակների նկատմամբ:

Քրիստոնյաներին պատկանող հողերը մշտապես մահմեդական ներխուժման սպառնալիքի տակ էին գտնվում: Ասորի քրիստոնյաներին վտանգ էր սպառնում Իրաքի մահմեդականների կողմից, քրիստոնյա Հայաստանին՝ Քուրդիստանի մահմեդականների կողմից:

---

3. “Kutci-bey Iomurdjinsky”. W. D. Smirnoff, p. 31.

Բուն Անատոլիայում թուրքերը, միացած տարբեր ծագում ունեցող ասիմիլացված ցեղերին, ճնշում էին քրիստոնյա հույներին, հայերին և նախաթուրքական ժամանակաշրջանի մյուս «հոռոմներին»:

Կառավարական իշխանությունը խրախուսում էր կրոնական հակամարտությունը և օգտագործում էր այն որպես միջոց ահաբեկելու և հնազանդեցնելու այն տարրերին, ովքեր հրաժարվում էին դավաճաններ դառնալուց, և որոնց դիմադրությունը իսլամին դիտվում էր որպես վտանգ թեոկրատական կառուցվածքին: Երկու, ընդդիմադիր կրոնական

աշխարհների միջև ժառանգական թշնամության մեջ կառավարությունը խաղում էր ոչ թե խաղաղեցնողի,այլ գլխավոր հրահրողի դեր: Հետևաբար, երկու ընդդիմադիր ճամբարները դարեր շարունակ կանգնած էին դեմ առ դեմ որպես թշնամիներ՝ հավատացյալներ և գյաուրներ, կառավարողներ և կառավարվողներ, զինվածներ և անզեններ, տերեր և ստրուկներ, շահագործողներ և շահագործվողներ, ավերիչներ և կերտողներ, նրանք, ովքեր վայելում են կյանքը առանց աշխատելու, և նրանք, ովքեր աշխատում են առանց վայելելու: Առաջինները համարվում էին հայրենիքի ճշմարիտ զավակներ, մինչ վերջինները միայն խորթ զավակներ էին: Մահմեդականները կոչված են սուր բռնելու հանուն իսլամի, իսկ քրիստոնյաները բեռնակիր անասուններ են, որ աշխատում են իսլամի փառքի համար, «փափուկ կարպետ են փադիշահի պատվանդանի համար:
Քաղաքական նվաստացումները և տնտեսական շահագործումը, որոնց ենթարկվում էր Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչությունը, բավարար չափով ցուցադրվում է ֆեոդալական միլիտարիզմի հաստատություններով, որոնք այնքան սարսափելի էին հատկապես նրանց համար:
Արևմտյան Ասիայի թուրքական տիրույթները բաժանվում էին երկու տասնյակ կամ մոտ այդքան ընդարձակ պրովինցիաների, որոնք կառավարվում էին բեյլերբեյների, այսինքն՝ բեյերի բեյեր կոչվող ֆեոդալ տերերի կողմից: Ամեն մի պրովինցիա կամ բեյլերբեյթե, իր հերթին ենթաբաժանված էր սանջակների, որոնք կառավարվում էին սանջակ-բեյերի կողմից: Սանջակները, նորից, կոտորակված էին հարյուրավոր կամ հազարավոր մանր վիճակների, այսպես կոչված քըլըչի կամ սաբրեի, որոնք կոչվում էին զիամեթ կամ թիմար, համաձայն նրանց չափի և եկամտի: Թիմարը վիճակ էր, որը տալիս էր մինչև 20000 ասպետի եկամուտ, իսկ զիամեթը՝ ավելի մեծ արժեքի: Փոքր վիճակների սեփականատերերը ենթարկվում էին սանջակ-բեյերին, ովքեր, իրենց հերթին, ենթակա էին բեյլերբեյին:
Սուլթանի սիրեցյալներին շնորհվում էին հողեր, որտեղ նրանք լիովին դրության տեր էին դառնում անձնական ծառայության և հեծելաջոկատներով ռազմական օգնություն ցույց պայմանով, հեծելաջոկատները հավաքագրվում էիք համաձայն սահմանված պաշտոնական ցուցակների: Ներկա պահին այդ հաստատությունը չէ ինքնըստինքյան մեր ուշադրությունը գրավողը, այլ որքանով այն վերաբերում է քրիստոնյա ազգաբնակչությանը: Երկրի մարդկային ուժի ռեսուրսների էթնիկական ու քաղաքական տեղաբաշխումը այս կազմակերպության սահմաններում շատ բազմանշանակ է: Եկեք, ամենից առաջ, հետազոտենք այս ֆեոդալական տիրույթների թվական հարաբերակցությունը մեզ հետաքրքրող տարբեր պրովինցիաներում:
(1) Անատոլիայի բեյլերբեյթեը, որն ընդգրկում էր ներկայիս չորս վիլայեթներ՝ Բրուսսան կամ Խուդավենդիշարը, Կաստամունին, Այդինը և Անգորան, բաժանված էր 14 սանջակների և 7311 քըլըչների, զիամեթների և թիմարների:
(2) Կարամանի բեյլերբեյթեը զբաղեցնում էր արդի Իկոնիա վիլայեթը, Անդորայի վիլայեթի Կեսարիա սանջակը և Ադանայի կոչվել Կարամանի, Նուրի-Սոֆիի անունով, ծագումով հայ, որն ընդունեց իսլամը և հիմնեց անկախ իշխանություն 1220 թվականին: Օսմանցիները այն նվաճեցին միայն 1472 թվականին և վերածեցին բեյլերբեյթեի: Կարամանը հաշվում էր 7 սանջակ և 1620 քըլըչ:
(3) Տրապիզոնի բեյլերբեյթեր, որը մոտավորապես գրավում էր ներկայիս

վիլայեթը Բաթում քաղաքով, հաշվում էր 554 քըլըչ:
(4) Ռում կամ Սվաղ, որը նույնպես գրավում էր մոտավորապես այժմյան ամբողջ վիլայեթը: Այստեղ նույնպես, հայ իշխաններից մեկը, որը մուսուլմանություն էր ընդունել, հիմնել էր Դանիշմանյանների հարստությունը 1097 թվին, որը 1165 թ.
ենթարկվել էր սելջուկյանների մի ճյուղին: Այս բեյլերբեյութը հաշվում էր 7 սանջակ և 3130 քըլըչ:
(5) Էրզրում, որը կազմված էր այժմյան վիլայեթից Բիթլիսի վիլայեթի Մելազկերտից. հաշվում էր 12 սանջակ և 5279 քըլըչ:
(6) Կարսը գրավում էր ներկայիս Կարսը և Կարսի՝ մարզի Կաղզվանի շրջանը, ներառյալ Էրզրումի վիլայեթի Բասենը և պարունակում էր 6 սանջակ և 1296 քըլըչ:
(7) Չըլդըրը, գրավում էր Կարսի մարզի Օլթիի և Արդահանի շրջանները, ինչպես նաև Ախալցխայի և Ալեքսանդրապոլի շրջանների մի մասը, հաշվում էր 13 սանջակ և 656 քըլըչ:
(8) Վան, ներկայիս Վանի և Մուշի սանջակները, 13 սանջակով և 1115 քըլըչով:
(9) Դիարբեքիրը գրավում էր ներկայիս վիլայեթը, Խարպուտ Մամուրեթ-ուլ-Ազիզ վիլայեթի Խարբերդ և Դերսիմ սանջակներով, ինչպես նաև Բիթլիսի վիլայեթի Աղերդը, և բաժանված էր 19 սանջակների և 730 քըլըչի: Սրա մեջ էին մտնում նաև 5 ինքնավար իշխանություններ:
(10) Մարաշ կամ Զուլքադրիա, ներկայիս Հալեպի վիլայեթը Մարաշ, Ադանայի վիլայեթի Կոզան և Մալաթիա (Խարբերդի) սանջակները: Հաշվում էր 5 սանջակ և 2169 քըլըչ:
(11) Հալեպ, ներկայիս նույն վիլայեթի Հալեպի, Ադանայի վիլայեթի Ադանա և Ջեբել-բերեքըը սանջակները, պարունակում էր 9 սանջակ և 903 քըլըչ:
(12) Շամ, ներկայիս Սիրիան, Երուսաղեմը և Լիբանանը 10 սանջակ և 996 քըլըչ:
(13) Ռաքքա, ներկայիս Հալեպի վիլայեթը Ուրֆա սանջակը և Զոր մութասարիֆությունը. պարունակում էր 7 սանջակ և 274 քըլըչ:
(14) Մոսուլ, ներկայիս Մոսուլի սանջակները, հաշվում էր 6 սանջակ և 274 քըլըչ:
(15) Շահրիզոր, Մոսուլի վիլայեթի ներկայիս նույնանուն սանջակը, նաև Վանի վիլայեթի Հաքքյարի սանջակը, հաշվում էր մոտավորապես 400 քրդական տոհմեր, իրենց համապատասխան առաջնորդներով:
(16) Բաղդադ, ներկայիս Բաղդադ և Բասրա վիլայեթները. հաշվում էր՝ 18 սանջակ, որոնցից 7-ը բաժանված էին մի քանի քըլըչների:
Պրովինցիաների առաջին խումբը, Անատոլիան և Կարամանիան, որոնք գրավում էին գրեթե ամբողջ Փոքր Ասիա թերակղզին և բնակեցված էին համարյա բացառապես մուսուլմաններով, հաշվում էին 21 սանջակ և 8931 քըլըչ:
Երկրորդ խումբը, բաղկացած գլխավորապես հայկական պրովինցիաներից, հաշվում էր 80 սանջակ, ներառյալ 5 իշխանություններ և 14285 քըլըչ:
Երրորդ խումբը, որ ընդգրկում էր գլխավորապես սիրիական քրիստոնեական պրովինցիաները, պարունակում էր 26 սանջակ և 2552 քըլըչ:
Ի վերջո, չորրորդ խումբը, որը գրավում էր Միջագետքի հարթավայրը և բնակեցված էր քրդական ու արաբական ցեղերով, հագիվ էր ճանաչում սուլթանի իշխանությունը: Սովորական տիպի բեյլերբեյութներ գոյություն ունեին միայն մի քանի խոշոր կենտրոններում: Երկրի մնացյալ մասը կառավարվում էր ցեղապետների կողմից, ովքեր ոչ ոքի չէին ենթարկվում:

Կարիք չկա ասելու, որ քըլըչների բոլոր կառավարիչները, բոլոր այս թիմարիոթները, զիամիթները, սանջակ-բեյերը և բեյլերբեյերը, բոլոր ֆեոդալ տերերը, փոքր ու մեծ, բացառապես մահմեդականներ էին: Այս իշխանավորները իրենց ոայաթների բացարձակ տերերն էին: Որքան մեծ էր այս տերերի թիվը, այնքան ծանր էր նրանց կառավարմանը ենթակա բնակչության ճակատագիրը: Պատկերացնելու համար քըլըչ կոչվածների նման անհավասար բաշխման նշանակությունն ու հետևանքները, օգտակար կլինի մի հայացք նետել վերոհիշյալ տերիտորիալ խմբերից յուրաքանչյուրի բյուջեի վրա: Այս հնամենի բյուջեն բավարար չափով լուսաբանում է մեր գլխավոր միտքը:

Անատոլիայի եկամուտները, որոնք ամբողջապես կամա մասամբ գանձվում էին հօգուտ նրա ֆեոդալ տերերի, կազմում էր 37318730 ասպեր: Կարամանիայինը՝ 10800175: Երկու, պրովինցիաների ընդհանուր եկամուտը, հետևաբար, 48110905 ասպեր էր:

Հայկական պրովինցիաների խումբը ընդամենը տրամադրում էր մոտավորապես 83683676 ասպեր: Պետք է նշել, որ միայն Վանը տարեկան վճարում էր 25079000 ասպեր, Սվազը՝ 13187327, Դիարբեքիրը՝ 11400000, Էրզրումը՝ 5906920, Կարսը՝ 9004119, Չըլդրըը՝ 9686000, Մարաշը՝ 9420310:

Սիրիական խումբը վճարում էր շուրջ 44271721 ասպեր Շամը՝ 6558600, և Հալեպը՝ 7713121:

Ինչ վերաբերում է չորրորդ՝ Միջագետյան և արաբա–քրդական խմբին, ապա Մոսուլի պրովինցիան վճարում էր 2240000 ասպեր, մինչդեռ Շահրիզորի և Բաղդադի եկամուտները հսկողությունից դուրս էին և յուրացվում էին նստակյաց ու վաչկատուն ցեղապետների կողմից:

